Պ. Ի՛նչեւն ամենագէտ տեսչութեան իւրոյ.

(3) մերթ յաջողելով. (4) մերթ լքանելով. (5)

մերթ ևս արգելով (6) զամենայն առ վախճան բարի ուղղէ: (7)

Հ. Օրակսի գերագոյն ներգործութիւն խնամարկութեանն Աստուծոյ բացայայտեն մեզ սուրբ զիւրք:

Պ. Գերապանծ գործ խնամարկութեանն լ'ստուծոյ:

(1) Ո՛րք այլ Աստուած գոյ բաց ի քէն՝ որում փոյթ իցէ վասն ամենեցուն. . . Արդար ես և արդարութեամբ վարես զամենայն: Իմաստ. Ժ. 13. 15:

2. Գարձուցանես զերեսս քո ՚ի նոցանէ և խռովին: Սաղմ. Զ. 29:

(3) Գու՛ց Տէր ծանաւար զյետին իմ և զառաջին իմ: Սաղմ. Զ. 5:

(4) Բարոյէին ընդ ամենայն երկիր Տեառն գործակցութեամբ: Մարկ. Ժ. 20:

5. Թոյլ ետ ամենայն հեթանոսաց գնալ ի ճանապարհս իւրեանց: Գործ. Ժ. 15:

(6) Եւ սփռեաց զնոսա Տէր Աստուած անտի ընդ երեսս ամենայն երկրի և դադարեցին ՚ի շինելոյ շքաշաքն և զաշտարակն: Շննդ. Ժ. 8:

(7) Գու՛ց իորհեցայք զինէն ՚ի չարութիւն և Աստուած իորհեցաւ վասն իմ ՚ի բարութիւն: Անդ. Ժ. 20:

տուածոյ է պարգեւել մարդոյն զառաջին եր-
ջանկութիւն, զոր կորոյս յԱշամ և տնօրի-
նել զիրկութիւն նորին ի ձեռն մարմնառու-
թեան միածին և նախայաւիտեան Որդւոյն
Աստուծոյ: (1)

Գ. 1. ՈՒՒԽՈՒՆ:

Յաղագս մարմնառութեան Որդւոյն Աստուծոյ:

Հ. Օրինել իմանամք անուամբ մարմնառութիւն:

Պ. Մարմնառութիւն Աստուածորդւոյն նշա-
նակէ առումն մարդկայինս բնութեան՝ որով
յԱստուածային և ի մարդկային բնութեանց
անձնաւորաբար միաւորելոց՝ եղև Աստուա-
ծամարդ: (2).

Հ. Լիարեւոր էր մարմնառութիւն Աստուածորդւոյն:

Պ. Լինչուշտ. քանզի պահանջելով արդարու-
թիւնն Աստուծոյ զբաւականութիւն՝ դատա-

(1). Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ մինչև զմրդին
իւր միածին ետ զի ամենայն որ հաւատայ ի նա: մի կո-
րիցէ այլ ընկալցի զկեանս յաւիտենականս: Յովհ. 4. 16.

(2). Մեծ է խորհուրդն Աստուածպաշտութեան, որ երևե-
ցաւ մարմնով: ա. Տիմ. 4. 16.

պարտեաց զմարդն ի մահ յաւիտենական (1)
վասն զանցանելոյ նորա զպատուիրանաւ իւ-
րով. և սրովհետեւ ոչ մարդս իւրովին, և ոչ
այլ ինչ յեղականացս բաւէին ջնջել զայս ան-
չափ մեղս առաջի Աստուծոյ, վասն որոյ հա-
ճեցաւ ողորմութիւն Աստուծոյ ի ձեռն մար-
դեղութեան Քանին յաջողել զարդարացու-
ցումն մարդոյն և փրկել զնա ի մշտնջենա-
կան կորստենէ. (2)

Հ. Ս ան էր կարեոր եղև Աստուածորդւոյն առնու-
ղմբս բնութիւն ի գործ միջնորդութեանն:

Պ. Ս ան այնորիկ՝ զի հայրն երկնաւոր ի
գործ փրկուէ մերոյ վարէր ընդ նմա իբրև
ընդ միջնորդի մերում և իբր ընդ նոյն իսկ
մարդոյն՝ զորոյ էր առել զկերպարան. զի հնար
լինէր նմա մեռանել մարդկութեն և մահուամբ
իւրով ունայնացուցանել զանէծս յաւի-
տենական մահուան՝ որ սահմանել էր մարդոյն:

(1). Ի միջէ մարդոյ մեղք յաշխարհ մսին և ի մեղափ
անտի մահ: Էդուվ. 12.

(2). Աստուած ի մեծն է ողորմութեամբ վասն բազում
սիրոյ զոր սիրեաց զմեզ. մինչդեռ մեռեալք էաք ի մեղս
մեր՝ կենդանիս արար զմեզ ի քրիստոս: Եփես. 2. 5.

Պ. Օրաւոր եղև մարմնացեալ Բանն հաճել զԱստ
ուած վասն մեղաց մարդկան:

Պ. Լներկբայ. նմա միայնոյ էր լինել միջնորդ
առաջի Լ.Յ վասն մարդոյ Լստուածամարդ
գորով. ըստ գրոց՝ Ս'ի է միջնորդ Լ.Յ և մարդ
կան՝ մարդն Յ.Ս.Վ. (1) որ և զօրաւոր եղև
շարժել զԼստուած յողորմութիւն մարդ
կան, ըստ բացատրելոյ սուրբ գրոց. Լմենայն
ինչ յԼստուածոյ՝ որ հաշտեցոյցն զմեզ ընդ
իւր 'ի ձեռն Վրիստոսի: (2)

Հ. Օրհարդ պարտ իցէ իմանալ զԱստուածայինն նախա-
սահմանութիւն վասն Բանին մարմնառութեան:

Պ. Թէ Լստուած ըստ ամենագէտ տեսչուէ
իւրոյ նախասահմանեալ էր զայս 'ի յաւիտե-
նից. ուստի և Վ.Ս անուանի Վառն զենեալ
'ի սկզբանէ աշխարհի: (3)

Հ. Յայտնեաց Աստուած երբեք մարդկան զնախասահ-
մանութիւն իւր վասն Բանին մարմնառութեան:

Պ. Լստուած խոստացաւ զառաջինն նախա-
տեղծից յետ անկման նոցա՝ առաքել յաշ-

(1). ա. Տիմ. բ. 5:

(2). բ. Կորն. ե. 18:

(3). Յայտ. ժգ. 8:

խարհ զՓրկիչ, (1) զորմէ ապա յայտնեաց
հաւատացելոց օրինակօք և մարգարէութիւնք: (2)

Հ. Օրհնչ օրինակք էին Աստուածորդոյն մարմնա-
ռութեան:

Պ. Ստանել քահանայապետին միանգամ 'ի
տարւոյն 'ի սրբութիւն սրբութեանց՝ նշա-
նակէր զմիջնորդութիւն նորա վասն մեր ա-
ռաջի Լ.Յ. (3) օձն պղնձի կախեալ զփայտէ
'ի բժշկութիւն հաւատացելոց զ'ի խաչի մահ
նորա. (4) Վառն զատկական՝ զոր ուտէին Խս-
րայէլացիք 'ի յիշատակ ելից իւրեանց յԱգգիպ-
տոսէ՝ զազատութիւն մեր զենամար նորին. (5)
և այլն:

(1). Ասէ Տէր Աստուած ցօձն. . . եղից թշնամութիւն 'ի
մէջ քո և 'ի մէջ կնոջդ. 'ի մէջ զաւակի քո. և 'ի մէջ
զաւակի դորա. նա սպասեցէ քու՝ գլխոյ. Ծննդ. 14 և 15:

(2). Բազում մասամբք և բազում օրինակօք կանխա-
խօսեցաւ Աստուած ընդ հարս մեր Սարգարէիւք. Եբր. ա. 1:

(3). Քրիստոս եկեալ քահանայապետ հանդերձելոցն բա-
րեաց. անձեռագործ խորանաւ. . . Եւ ոչ արեամբ նոխազաց
և զուարակաց, այլ իւրով արեամբ եմուա միանգամ 'ի
սրբութիւնն. յաւիտենական գտեալ զփրկութիւն. Անդ.
Թ. 11. և 12:

(4). Որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատին ոյնոյնպէս
բարձրանալ պարտ է Որդւոյ մարդոյ. Յովհ. գ. 14:

(5). Առցեն իւրեանց իւրաքանչիւր ոչեաւ. . . Վշխար կա-
տարեալ արու. տարւոր անարատ. փութանակի ուտիցէք զի
զատիկ Տեառն է. Ելից. ժբ. 3. 5. և 11. Տես և Յայտ

Հ. Որպիսի մարգարէութիւնք եղեն զլստուածորդւոյն մարմնառութիւնէ:

Պ. Ս ասն ժամանակի մարմնառութեան նորա ասացաւ ՚ի ձեռն Սովիսի մարգարէին. Ս' պակասեցի իշխան ՚ի Յուդայ և մի' պետ յերանաց նորա մինչև եկեսցեն նմա հանդերձեալքն. և նա է ակնկալուին հետնոսաց. (1) Յաղագս ծագման նորա ըստ մարմնոյ յաղգէ Ղաւթի՝ գուշակեաց Սարգարէն իրեմիաս. Մհա աւուրք գան ասէ Տէր՝ և յարուցից Ղաւթի ծագումն արդարութ. (2) Օ ծննդեան նորա ՚ի կուսէն՝ մարգարէացաւ Լսայիաս. Մհա կոյս յղացի և ծնցի որդի և կոչեսցեն զանուն նորա Լամանուէլ, որ թարգմանի ընդ մեզ Մհ. (3) Իսկ զտեղւոյ ծննդեան նորա նախաձայնեաց Սիբիէ Սարգարէ. Ղաւթի իշխան տուն ի փրատայ սակաւաւոր՝ իցես լինել ՚ի հազարաւորս Յուդայ: Իբէն ելցէ ինձ լինել իշխան Իսրայելի և ելք նորա ՚ի սկզբանէ աւուրց աշխարհի: (4)

(1) Օննդ. խթ. 10.

(2) Երեմ. իգ. 5.

(3) Եսայ. 4. 14.

(4) Սիբ. 2.

Հ. Որպիսի մարգարէութիւնք եղեն զմարմնացեալ Որդւոյն Աստուծոյ:

Պ. Ովէէ մարգարէացաւ զփախստենէ նորա յԳիպտոս և զդարձէն անտի. յեգիպտոսէ կոչեցի զորդի իմ: (1) Օ քարիաս՝ զմեծահանդէս մտից նորա յԻրուսաղէմ Վարդեան գուսոր իրուսաղէմի. ասն թագաւոր քո գայ աւ. բեզ. արդար և փրկիչ. նոյն հեզ և հեծեալ ՚ի վերայ իշոյ՝ և յաւանակի նր. (2) Լսայիաս՝ զհարջարանաց նր և զմահուանէն. Տեսաք մեք զնա՝ և ոչ գոյր նորա տեսիլ և ոչ գեղեցկութիւն. այլ տեսիլ նորա անարգ և նուազեալ քան զամենայն որդւոց մարդկան. նա վերաւորեցաւ վասն մեղաց մերոց: Իբրեւ ոչխար ՚ի սպանդ վարեցաւ. իբրեւ որոջ առաջի կտրէ անմուռնչ կայ. Յանօրէնութեանց ժողովրդեան իմոց ՚ի մահ վարեցաւ: (3) Ղաւթի՝ զյարութենէ նորա Սի տացես սիք քում տեսանել զապտկանութիւն: (4) Օ համբարձմանէ նորա յերկինս. Լիլ ՚ի բարձունս

(1) Ովէէ. ժա. 1.

(2) Չարար. թ. 9.

(3) Եսայ. ծգ. 2. 3. 5. 4. 8.

(4) Սաղմ. ժե. 10.

Դ Յարիւսաւ Սի և
յիւրեանս Թ յարիւսաւ նր
Աստուծոյ.

գերեաց զգերութիւն. (1) և Օհստելոյ նորա ընդ աջմէ Մատուծոյ Հօր. Մաց Տէր ցՏէր իմ նիստ ընդ աջմէ իմմէ : (2)

Հ. Ս. ասն էր զմարգարէութիւնսդ զպոռնիկ վերածեմք յանձն Յիսուսի քրիստոս :

Պ. Ս. ասն այնորիկ՝ զի Յիսուս Վրիստոս ըստ խոստմանց և մարգարէութեանց (3) յանցանել թագաւորութեան չրէից 'ի ձեռս Հռովմայեցւոց (4) 'ի սերնդոցն Մբրահամու՝ 'ի ցեղէն Յուդայի յազգէ Ղաւթի (5) յղացեալ 'ի Վաղարէթ ներգործութեամբ Հոգւոյն սրբոյ. ծնաւ 'ի Ռեթընհէմ 'ի Սարիամայ կուսէն : (6)

Հ. Օհրարդ անուանեցաւ Մատուծորդին ի ժամանակի մարմնառութեանն :

Պ. Ս. Մատուծոյ 'ի ձեռն հրեշտակին անուանեցաւ Յիսուս, որ Հրէարէն փրկիչ լի. վս

(1) . Սաղմ . 44 . 19 .

(2) . Սաղմ . 27 . 1 .

(3) . Զորմէ գրեաց Մովսէս յօրէնսն և Մարգարէք . գտաք զՅիսուս . Յովհ . ա . 43 :

(4) . Յաւուրս Հերովդէի արքայի : Մատ . ք . 1 .

(5) . Գիրք ծննդեան Յիսուսի քրիստոսի որդւոյ Ղաւթի Մբրահամու . Մատ . ա . 1 :

(6) . Առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ յՄատուծոյ 'ի քաղաք մի Գալիլեացւոց որում անուն էր Նազարէթ՝ առ կոյս : Պաղ . ա . 26 :

փրկելոյ նորա զազգ մարդկան 'ի յաւիտենից մահուանէ : (1)

Հ. Օհրարդ ևս .

Պ. Վրիստոս՝ որ Յուսարէն օծեալ Թարգմանի . (2) և այս վասն այնորիկ՝ զի 'ի հնումն օծանէին Վահանայք . (3) թագաւորք . (4) և Մարգարէք . (5) և որովհետեւ Յիսուս զայսոսիկ երիս աստիճանս իսկ ունէր յինքեան, վս որոյ և կոչեցաւ Վրիստոս : (6)

(1) . Կոչեցես զանուն նորա Յիսուս . քի նա փրկեացէ զժողովուրդ իւր 'ի մեղաց իւրեանց : Մատ . ա . 21 :

(2) . Ասէ շնոսա Պիղատոս . զո՞ր կամիք յերկուց աստի՝ զի արձակեցից ձեզ , զՅեսու Բարաբբա՞ , եմէ զՅիսուս զանուանեալն քրիստոս : Մատ . ի . 17 :

(3) . Էարկ Մովսէս յիւղոյ օծութեանն ի գլուխն Մահրօնի և էօծ զնա և սրբեաց զնա : Ղաւթ . ք . 12 :

(4) . Էառ Սամուէլ զսրուակն իւղոյ և եհեղ ի գլուխն Սաւուղայ . . . և ասէ ցնա՝ էօծ զքեզ Տէր ի վերայ ժառանգութեան իւրոյ իշխան : ա . Թագ . Ժ . 1 :

(5) . Ղեղիսէէ որդի Սաիաթայ . . . օծցես 'ի մարգարէ փոխանակ քո : ք . Թագ . Ժ . 16 :

(6) . Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մեքիսդեպի : երբ . Ե . 17 : Զամենայն ինչ հնազանդ արար (Մատուած) 'ի ներքոյ ոսից նորա և զնա եղ ի գլուխ ի վերայ ամենայն ինչք եկեղեցւոյ : Եփես . ա . 22 : Հոգի Տեառն ի վերայ իմ . վասն որոյ և էօծ իսկ զիս աւետարանել աշխատայ : Պաղ . Գ . 18 :

Հ. Օրինչ գրի 'ի հանգանակին վասն մարմնառութեան
որդւոյն Նստուծոյ:

Պ. Երբորդ անդամ. Որ յաղագս մեր մարդ-
կան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկ-
նից. մարմնացաւ. մարդացաւ, ծնաւ կատա-
րելապէս 'ի Սարիամայ սրբոյ կուսէն Հոգ-
ւոյն սրբով:

Հ. Օրինչ դաւանիմք ըստ այդմ անդամոյ հանգանակից.
Պ. Ի՞նչ Որդին Նստուծոյ ըստ ողորմութեան
իւրում առ մեզ մեղաւորքս՝ էջ յերկնից
վասն մերոյ փրկութեան, ծնաւ իջմամբ հոգ-
ւոյն նոյն 'ի կուսէն Սարիամայ. էառ զմարդ-
կայինս մարմնս՝ և եղև մարդ կատարեալ բաց
'ի մեղաց:

Հ. Օրինչ գործէր յերկրի Արդին Նստուծոյ զկնի մարմ-
նառութեանն իւրոյ:

Պ. Յուցանելով մարդկան զճանապարհ հաշ-
տութեան ընդ Նստուծոյ, յայտնէր զսուրբ
կամս նորա. քարոզէր զսպաշնարութիւն և
զաստուածգիտութիւն ճշմարիտ. (1) հրաշա-
դործէր 'ի բժշկութիւն ախտաժեւոաց. (2)

(1) Հոգի՝ է Նստուած և երկրպագուաց նորա հոգւով և
ճշմարտութեամբ պարտ է երկիրապանել. Զովհ. Գ. 24
(2) Բազումք հաւատացին յանուն նորա զի տեսանէին
զնշանս՝ զոր անէր. Ընդ Բ. 23:

ուսուցանէր յամենայն սրտէ և յամենայն
անձնէ ծառայել Նստուծոյ. (1) հաւատալ
յինքն իբր յՆստուածաւաք փրկիչ. (2) սիրել
դբարեկամս և զթշնամիս. (3) և բացայայտէր
թէ յինչ կայանայ ճշմարիտ երջանկութիւն
մարդկան, (4)

Հ. Օրինչ ևս յայտնեն մեզ գիրք զՅիսուսէ քրիստոսէ:
Պ. Օրկեալ վիճակ նորա՝ զնուաստութեան
և զփառաւորութեան. զորս բացերեակի նը-
կարագրէ Նաքեալն Պօղոս Օանձն ունայ-
նացոյց զկերպարանս ծառայի առեալ՝ 'ի նը-
մանութիւն մարդկան եղեալ, և կերպարանօք
գտեալ իբրև զմարդ. խոնարհեցոյց զանձն,
լեալ հնազանդ մահու չափ, և մահու խաչի,

(1) Սիրեցես զՏէր Նստուած քո յամենայն սրտէ քումմի
և յամենայն անձնէ քումմի և յամենայն մտաց քոց:
Մատ. իր. 37:

(2) Այս են կամք Հօր իմոյ, զի ամենայն որ տեսանէ զորս
դի և հաւատոյ 'ի նա, ընկալցի զկեանս յաւիտենականս.
Զովհ. Գ. 40:

(3) Սիրեցէք զթշնամիս ձեր. բարի արտրէք ատելեաց ձե-
րոց. Մատ. Ե. 44:

(4) Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն
երկնից. Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին Երանի
հեղոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր. Երանի որ քաղցեալ
և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեցցին.
Մատ. Ե. 3-4-5-6. մինչև ց12:

վասն որոյ և Մատուած զնա առաւել բարձրացոյց. և շնորհեաց նմա անուն՝ որ ՚ի վեր է քան զամենայն անուն. զի յանուն Յիսի Բարձրաւորաց Ժուհի կրկնեսցի, երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց : (1)

Հ. Օրհնէ գրի ՚ի հանգանակի զվիճակէ նուաստութեալ նորա :

Պ. Չորրորդ անդամ. Չարչարեալ, խաչեալ, Թաղեալ :

Հ. Օրհնէ դաւանիմք ըստ այդմ անդամոյ հանգանակիդ :

Պ. Եւ Յիսուս Վրիստոս ՚ի ցոյց մեծի սիրոյն իւրոյ առ մեզ և ՚ի մերս փրկուի, (2) չարչարեցաւ ՚ի Հրէից առ Պիղատոսիւ. որ էր դատաւոր Հրէաստանի կարգեալ ՚ի Հռովմայեցւոց. բւեռեցաւ ՚ի նոցանէ ՚ի խաչափայտի, և յերեկոյի այնր աւուր յետ մահուանն՝ բարձաւ ՚ի խաչէ և Թաղեցաւ ՚ի գերեզմանի :

Հ. Ս ասն էր չարչարեցաւ քրիստոս առ իշխանութեամբն Պիղատոսի :

Պ. Օրհնէ վկայ լինէր հեթանոս և այլազգի դաւանանքի :

(1). Փիլիպ. Բ. 7. 8. 9. և 10.

(2). Մեծ ևս քան զայս սէր ոչ որ ունի եթէ զանձն իւր ղիցէ ՚ի վերայ բարեկամաց իւրոց : Յովհ. Ժե. 13 :

տաւորն անմեղութեան նորա. (1) և մեք հաւատայաք, Թէ նա ոչ վասն մեղաց ինչ իւրոց, այլ կամաւորապէս վասն մերոց յանցանաց յանձն էառ զչարչարանս և զմահ :

Հ. Օրհնէ իսրիդ պարտ է իմանալ զչարչարանս քրիստոսի :

Պ. Վրիստոս չարչարեցաւ մարմնով և ոչ Մեղութեամբ. զի Մատուածութիւն անչարչարելի է. Թէ և ՚ի մարդկութենէն անբաժան մնայր յայնժամ ՚ի նմա :

Հ. Օրհնէ զմահս քրիստոսի :

Պ. Վրիստոս ճշմարտապէս մեռաւ մարմնով և մահուամբն իւրով ելոյժ զանէծս յաւիտեանական մահուն՝ յոր ազգ մարդկան դատապարտեալ էր յՄատուծոյ :

Հ. Օրհնէ ասի ՚ի հանգանակին զվիճակէ փառաւորութեանն քրիստոսի :

Պ. Հինգերորդ անդամ. յերրորդ աւուր յարուցեալ :

Հ. Օրհնէ ըստ այդմ անդամոյ հանգանակիդ խոստովանիմք :

Պ. Եւ Յիսուս Վրիստոս կատարեալ զգործ

(1). Եւ դարձեալ Պիղատոս արտաքս և ասէ ցնոսա (ցարկէ այս) ահա ածեմ զնա արտաքս առ ձեզ, զի գիտասցիք Թէ ես քննա ինչ ի նմա (ի քրիստոս) ոչ գտանեմ : Յովհ. Ժե. 19 :

փրկութեան մերոյ՝ յաւուր երրորդի յետ
մահուան իւրոյ՝ յարեալ զօրուք Մատու-
ածունն ի գերեզմանէ ըստ վկայելոյ Մաթե-
լական գրոց. (1) որոց և բազում անգամ
երեւեցաւ յետ յարութեան ի փառաւո-
րեալ մարմնի : (2)

Հ. Օրինչ եցոյց քրիստոս յարութեամբ իւրով :
Պ. Թէ ինքն է ճշմարիտ Մեսիայ. յՄատու-
ածոյ խոստացեալ Փրկիչ ազգի մարդկան .
նոյնպէս ճշմարտեաց զսեփական նախաձայնութիւն
զյարութենէ իւրմէ (3) ի մեռելոց , և ա-
ներկբայ հաստատեաց զայս ընդ հանրական
յարութեան մերոյ : (4)

(1). (քրիստոս) է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ . որ է սկիզբն ,
անդրսնիկ ի մեռելոց : Կողոս . ա . 18 :

(2). Զայս երկոս անգամ երեւեցաւ Քիսուս աշակերտացն յա-
րուցեալ ի մեռելոց : Յովհ . իա . 14 . Եւ զորք փակելովք ուր
էին աշակերտքն ժողովեալք վասն ահին շրէնց եկն Քիսուս
և եկաց ի միջի նոցա , և ասէ ցնոսա , Ողջոյն ընդ ձեզ իբրեւ
զայս ասաց եցոյց նոցա զձեռն և զկողմ իւր : Յովհ . ի . 19 և 20 :
(3). Զի որպէս էր Յովնան ի փոր կիտին զերիս սիւս և
զերիս գիշերս . այնպէս եղևի և որդի մարդոյ ի փոր
երկրի զերիս սիւս և զերիս գիշերս : Մտ . ժբ . 40 :

(4). Այլ արդ քրիստոս յարուցեալ է ի մեռելոց առա-
ջին պտուղ ննջեցելոց . . . Որպէս Ադաման ամենեքեան մե-
ռանին նոյնպէս և քրիստոսիւ ամենեքեան կենդանացին .
ա . Կորն . ժե . 20 , և 22 :

Հ. Օրինչ ևս անմահի ի հանգանակի զվճակէ փա-
ռաւորութեան նորա :

Պ. Մէցերորդ անդամ . Լյեալ ի յերկինս՝
նովին մարմնով նստաւ ընդ աջմէ Հօր :

Հ. Օրինչ դաւանիմք ըստ այսմ անդամի հանգանակիդ :

Պ. Թէ Հիսուս Քրիստոս ի քառամաներորդում
աւուր զինի յարութեան իւրոյ՝ յառաջիկա
յութեան Մաթեւոյ իւրոց և բազմութեան
ժողովրդոց՝ համբարձաւ զօրուք Մատուած-
ութեանն մարմնով հանդերձ ի յերկինս և
անդ նստի ընդ աջմէ Հօր : (1)

Հ. Օրինչ նշանակէ նստիլն քրիստոսի ընդ աջմէ Հօր :

Պ. Լճնուլ նորա ըստ մարդկութեանն զայն
Մատուածային և զՄատուածոյ Հօր հաւատար
իշխանութիւն և զփառս՝ զոր ի յաւիտենից
ունէր ըստ Մատուածութեանն՝ բայց որ
ծածկեալն էր յերկրի ընդ քօղով մարդ-
կութեան նորա :

Հ. Օրինչ յոյս պարգեւէ մեզ համարձուսն քրիստո-
սի յերկինս :

Պ. Որպէս Հիսուս Քրիստոս փառաւորեցաւ

(1). Եւ ինքն տէր Քիսուս յետ խօսելոյն ընդ նոսա՝ համ-
բարձաւ յերկինս և նստաւ ընդ աջմէ Հօր , Մարկ . ժբ . 19

ի յերկինս ընդ մարդկութեանն. և յետ չար
չարանաց և մահուանն համբարձաւ մարմնով
յերկինս. նոյնպէս փառաւորեացիք և ամենայն
արդարք: (1)

Գ. Լ. Ո. Ի. Խ. Օ.:

Յաղագս շնորհաց Աստուծոյ:

Հ. Օ. Ի. Խ. Ն. չ պտուղ արդեանց իւրոց եթող մեզ
ֆրիստոս:

Պ. Պտուղ արդեանց նորա շնորհք են՝ զոր
ընկալաւ առ յԱստուծոյ վասն մեր:

Հ. Օ. Ի. Խ. Ն. է շնորհքն:

Պ. Լ' ներեղութ և ճրիստուր պարգև բարուէն
Աստուծոյ՝ առաքեալ մեզ ի փրկութի. (2):

Հ. Օ. Ի. Խ. արդ պարգևի մեզ շնորհքն Աստուծային:

Պ. Ը նորհքն բղխի ի հօրէ Աստուծոյ.
արդիւնաւորի մեզ յորդուոյ Աստուծոյ և
պարգևի ի ձեռն Հոգւոյն սրբոյ:

Հ. Օ. Ի. Խ. Ն. ներգործութիւն է շնորհաց:

Պ. Ը նորհքն աստուծոյ լուսաւորէ զմիտս

1. Այլ Աստուած... մինչդեռ մեռեալք էաք ի մեղս
մեր՝ կենդանիս արար զմեզ ի ֆրիստոս. ընդ նմին յարոյց
և ընդ նմին նստոյց յերկնաւորս ի ֆրիստոս Յիսուս,
Եփես. բ. 4, 5, և 6:

2. Ամենեքեան մեղան և նուաղեալ են ի փառացն Աստու-
ծոյ, և արդարանան ձրի նորին շնորհք. Հռով. 4. 23. և 24.

մեր(1). ուղղէ զկամս մեր առ բարին, զօրա-
ցուցանէ զմեզ ի գործս բարութեան. (2) և
կենագործէ զմեզ հոգեւորապէս ի ժառան-
գութիւն յաւիտենական երանութեան(3):

Հ. Լ' արդեօք ամենեցուն պարգևի շնորհք Աստուծոյ թէ
ոմանց և եթ:

Պ. Լ' մենեցուն պարգևին շնորհք. (4) բայց
թողեալ է ի կամս իւրաքանչիւր ուրուք
ընդունել զայն կամ ոչ(5):

Հ. Օ. Ի. Խ. արդ ինդրին շնորհք յԱստուծոյ:

Պ. Ը երմեռանդն աղօթիւք:

Հ. Օ. Ի. Խ. Ն. է աղօթքն:

Պ. Լ' զթքն է համբարձումն մտաց և սրտի առ
Լ' Ը և խնդիր հոգեշահ բարեաց ի նմանէ:

Հ. ՈՐք են հոգեշահ բարիք՝ աղօթիւք ինդրելք:

1. Տալ զգիտութիւն փրկութեան ժողովրդեան իւրոյ.
Ծագել զլոյս ի վերայ այսոցիկ՝ որ նստեաք ի խաւարի
և ի ստուերս մահու: Ղուկ. 77. 79.

2. Աստուած է՝ որ յաջողէ ի մեզ զկամին և զառնելն
վասն հաճութեան. Փիլիպ. բ. 13.

3. Ապրեցոյց զմեզ ի ձեռն աւազանին միւսանգամ ծը-
ննդեան և նորոգութեան Հոգւոյն սրբոյ, զոր էհեղ ի
մեզ առատութեամբ. Տիտ. գ. 5. և 6.

4. Գտանի ինդրողաց իւրոց. հասանի առ ցանկացողսն
իւր... որ կանխեաց առ նա ոչ վաստակեսցի. զի դեգերեալ
գտցէ զնա առ դուրս իւր: Մատթ. 13. 14. և 15.

5. Խստապարանոցք և անթլպատք սրտիւք և ականջօք.
Դուք հանապազ Հոգւոյն սրբոյ հակառակ կայք. Գործ. ե. 51.

Պ. Պարունակեալքն 'ի Տերունական աղօթքն :

Տ. Նումն աւանդեցաւ Տերունական աղօթքն :

Պ. 'ի Վրիստոսէ Յիսուսէ Տեառնէ մերմէ՝
որ ուսոյց աշակերտաց աղօթել այսպէս. Հայր
մեր որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո.
եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո
որպէս յերկինս և յերկրի. Օ հաց մեր հանա-
պազորդ տուր մեզ այսօր. և թող մեզ զպար-
տիս մեր. որպէս և մեք թողումք մերոց
պարտապանաց. և մի՛ տանիր զմեզ 'ի փոր-
ձութիւն. Լ. յլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ. Օ 'ի քո է
արքայութիւն զօրութիւն և փառք յաւիտեանս, ամէն.

Տ. 'ի քանի՜ մասունք բաժանի աղօթքս :

Պ. Յերիս 'ի յառաջաբանութիւն, յեօթն
հայցուածս և 'ի վերջաբանութիւն :

Տ. Լսա զյառաջաբանութիւնն :

Պ. Հայր մեր՝ որ յերկինս ես :

Տ. Օ 'ի նէ են միտք յառաջաբանութեանս :

Պ. Լ. յսուիկ ուսուցանէ մեզ Վ. 'ի ցանկալն
մեր յաղթական վս հոգեշահ բարեաց, մատ-
չել առ Լ. 'ի ահ ընդ ահ իբրեւ զճառայս,
այլ հաստատուն յուսով իբրեւ զաւակք որ
դեգրեալք շնորհօք առ հայր որդեսեր :

Տ. Որպիսի է յոյսով բառդ յերկինս ասի լինել լստուած :

Պ. Ոչ վասն այնորիկ, իբր թէ Լստուած
գտանի յերկինս և եթ. զի նա զօրութեամբ
իւրով է՝ և յերկրի և ամենայն ուրեք, այլ
վասն այնորիկ՝ զի յերկինս, այսինքն ընդ հը-
րեշտակաց և սրբոց, կայ առանձինն շնորհօք
իւրովք և յայտնէ նոցա զփառս իւր :

Տ. Որպիսի է առաջն հայցուածն և զինչ զօրութիւն նորս :

Պ. Ուրբ եղիցի անուն քո. Լ. յսինքն՝ Լս-
տուած մեր, առաքեալ առ մեզ զօգնութիւն
քո. զի բարեպաշտութեամբ վարեցո՛ւք զկեանս մեր՝
որով փառաւորի անուն քո. 'ի ձեռն շնորհաց
քոց հեռացո՛ զմեզ 'ի մեղաց և յարատոց՝
որովք անարգի անուն քո. դարձո՛ զանհաւատս
'ի գիտութիւն Լստուածութեան քո և զա-
նօրէնս 'ի ճանապարհ առաքինութեան, զի ընդ
ա մենայն տեղիս փառաւորեսցի անուն քո :

Տ. Որպիսի է երկրորդ հայցուածն և զինչ միտք նորին :

Պ. Եկեսցէ արքայութիւն քո. Լ. յս է հայր
մեր՝ բարձ 'ի մէջ զտէրութիւն մեղաց դու-
ինքնին թագաւորեալ 'ի հոգիս մեր շնորհօք. և
յետ կարճօրեայ կենացս մերոց հաղորդս արա
զմեզ բարեց քոց 'ի քում երկնից արքայութե :

Տ. Որպիսի է երրորդ հայցուած և զինչ զօրութիւն նորս :

Պ. Լիզեցին կամք քո որպէս յերկինս և յերկ-
 ուի . Լիսինքն է զօրացո՛ զմեզ Տէր 'ի գե-
 տութիւն և 'ի պահպանութիւն օրինաց քոց .
 շնորհեա մեզ զգաստութիւն խոնարհ կամօք
 յամենայնի զհետ երթալ առաջնորդութեան
 խնամարկութեան քո . պարգևեա մեզ այնպէս
 կատարել զկամս քո յերկրի, որպէս կատարեն
 հրեշտակք 'ի յերկինս :

Չ. Որպիսի է չորրորդ հայցուածն և զի՞նչ իմաստնորա .
 Պ. Օհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այ-
 սօր . Լիսինքն, Տէր մի՛ զրկեր զմեզ 'ի հո-
 գեւոր և 'ի մարմնաւոր կերակրոց . 'նախ 'ի
 շնորհաց քոց, 'ի հաղորդութենէ խորհրդոց
 Վրիստոսի քո . և ապա յերկրաւորս բարեաց
 հարկաւորաց առ դարման կենաց :

Չ. Որպիսի է հինգերորդ հայցուածն և զի՞նչ մեկ-
 նութիւն նորա :

Պ. Լիւթո՛ղ մեզ զպարտիա մեր, որպէս և
 մեք թողումք մերոց պարտապանաց . Լիս է՛
 Տէր Լստուած մեր, ներողամիտ լեր առ մեզ՝
 որք իբրեւ զգաւոր պարտապանս տկարանամք
 հատուցանել զպարտիա մեր, զպարտիա օրինա-
 զանցութեան մերոյ և ներհակութեան քոց
 սուրբ կամաց . քանզի օր ըստ օրէ մեղանչե-

լով մեր՝ ո՛չ երբէք կարեմք ջնջել զմեզս
 մեր առաջի քո . այլ միայն խոստանամք ներել
 զըկանաց՝ զորս կրեմք 'ի մերոց ընկերաց :

Չ. Որպիսի է վեցերորդ հայցուածն և զի՞նչ զօրութիւն նորա :

Պ. Լիւ մի՛ տանիր զմեզ 'ի փորձո՛ւի . Լիս
 ինքն, ազատեա՛ զմեզ Լստուած մեր յալ
 խարհի աստ 'ի վտանգից և 'ի փորձութեանց .
 կա՛մ գոնէ մի՛ առաքեր առ մեզ զփորձո՛ւիս՝
 վերագոյնս քան զկար մեր . զի անյողդողդ
 մնացեն յոյս մեր առ քեզ և հաւատք :

Չ. Որպիսի է եօթներորդ հայցուածն և զի՞նչ իմաստնորա .

Պ. Լիւ փրկեա՛ զմեզ 'ի չարէն . Լիս է՛ նա
 խապահպանեա՛ զմեզ շնորհօք քովք Տէր 'ի
 խորամանկութեամբ չարահար թշնամոյն հոգւոց
 մերոց . հեռի՛ պահեա զմեզ 'ի պատրուական
 դիպուածոց 'ի մեզս . և անվախճան ողորմուք
 քով զերծո՛ զմեզ 'ի յաւիտենական տան-
 ջանաց և 'ի մասնակցութենէ սատանայի :

Չ. Որպիսի է վերջաբանութիւն տերունական աղօթից և
 զի՞նչ զօրութիւն նորա :

Պ. Օհ քո՛ է արքայութիւն և զօրութիւն և
 փառք յաւիտեանս ամէն . Լիսինքն՝ Տէր
 Լստուած մեր, մատուցա՛ք քեզ զաղօթս մեր
 և յայտնեցա՛ք առաջի քո զպէտս մեր և զկա-

բիւս, և աներկմիտ յուսամբ ընդունիլ առ ՚ի քէն զամենայն հոգեշահ բարիս. զի դու գովով ամենակարող, զամենայն հայցուածս մեր կարես կատարել. և գովով ամենաբարի՝ ոչ յամեսցիս ՚ի շնորհելոյ մեզ զամ բարիս:

Հ. Օրինչ ևս միջոց գոյ հայցելոյ զշնորհս:

Պ. Ստադիւր ունկնդրութիւն և ընթերցանութիւն Մատուածաշունչ պատգամաց. քան զի անտի մարթ է իմանալ զկամս Մատուծոյ. անդ մարթ է տեսանել զօրինակ վարուց սբբ վասն զճեա երթալոյ նոցա. անդ է սրբազան Սարգսայետութիւն՝ մարգիչ վարուց և սրբութիւն: (1)

Հ. Որպիսի են նշանք շնորհաց ընախելոց ՚ի մարդում:

Պ. Պատուղք ՚ի մարդում բնակեալ շնորհաց առաքինութիւնք են: (2)

Հ. Օրինչ է առաքինութիւն:

Հ. Կատարումն օրինաց Մատուծոյ:

1. Ամենայն գիրք Մատուածաշունչք և օգտակարք, ՚ի վարդապետութիւն են՝ ՚ի յանդիմանութիւն, և յուղղութիւն և ՚ի խրատ արդարութեան, օր կատարեալ իցէ մարդն Մատուծոյ յամենայն գործս բարութեան հաստատեալ. Բ. Տիմ. գ. 16 և 17:

2. Պատու շողացն այս է, սէր, խնդութիւն, խաղաղութիւն երկայնմութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հսկատ, հանդարտութիւն, հեղուօրին, ժուժկալութիւն, ճշնունք: Գաղատ. ե. 22 և 23:

Գ Լ ՈՒ Խ Ի

Յաղագս օրինաց Մատուծոյ:

Հ. Օրինչ է օրէնք Մատուծոյ:

Պ. Օրէնքն Մատուծոյ է ուխտ՝ որով Մատուած ազգի մարդկան անկեղոյն Մշամաւ խոստանայ զերանութիւն յաւիտենից: (1)

Հ. Օրարդ բաժանի օրէնքն Մատուծոյ:

Պ. Յօրէնս հնոց ուխտի և յՄշտարանի:

Հ. Օրինչ է օրէնք հնոց ուխտի:

Պ. Բարոյական, եկեղեցական և քաղաքական կանոնք՝ որք տուան ՚ի ձեռն Սովիսի Խորալէւան տոհմի:

Հ. Օրինչ է քաղաքական օրէնք հնոց ուխտի:

Պ. Բաղաքական օրէնք են Մատուածադիր կանոնք վասն քաղաքական և դատաստանական գործոց ժողովրդեանն. Հրէից, որք տեւելոց էին միայն մինչև ցգալուստ Սեսիայի: (3)

1. Պահեսլէք զամենայն հրամանս իմ և զամենայն զիրաւունս իմ, արասլէք զնոսա. զոր արարեալ մարդո՞ կեցցէ նորօր. Ղևտ. ժը. 5: Շնորհք նորա էք փրկեալք ՚ի ձեռն հաւատոյ: Եփես. բ. 3:

2. Պատուիրեաց ինձ Տէր ՚ի ժամանակի յայնմիկ ուսուցանել իրաւունս ձեզ՝ և դատաստանս: Բ. Օրէնք. դ. 14: Բարձրի Օծութիւն. և իրաւունք ոչ իցեն ՚ի նմա և քա՞

Հ. Օխճն նշանակեն եկեղեցական օրէնք հնոյ ուխտի :
 Պ. Եկեղեցական օրէնք են Լստուածահրա-
 ման կանոնք վասն արտաքին սրբազործութե-
 ւ սրբազան արարողութեց յեկեղեցւոյ շրէ-
 ից : (1) որք նկարագրէին զԲարիստոս (2) և ոչ
 կարէին տեւել անդր քան զգալուստ նորա : (3)
 Հ. Յիճն կայանան բարոյական օրէնք հնոյ ուխտի :
 Պ. Յամենակատար հրահանգս վարուց : (4) որք
 պարաւանդեն զխրաքանչիւր ոք յաւերժա-
 բար : (5)

ղաքն և սրբութիւն ապականեացին առաջնորդաւն հանդերձ
 որ գայցէ : Գան . Թ . 26 :

1 . Պատմէ զբան իւր Յակովբայ զաղարուծիւն և զ-
 րաւունս խրայելի : Սաղմ . ճին է . 8 :

2 . Որք են ստուերք հանգերձելոցն . այլ մարմին քրիս-
 տոս է : Կողոս . Բ . 17 :

3 . Ի քրիստոս Յիսուս՝ ոչ թէ պատուիւն ինչ կարող է :
 Գաղատ . Ե . 6 : Միով պատարագաւ կատարեաց զսրբեալն
 ի մշտնջենաւորս : Երբ . Ժ . 14 :

4 . Օրէնք սուրբք են՝ և պատուիրանն սուրբ և ար-
 դար և բարեբար : Հռովմ . Ե . 12 :

5 . Այլ յորժամ հեթանոսք որք զօրէնս ոչ ունին , բնու-
 թեամբ զօրինացն գործեն . նոքա՝ որք զօրէնս ոչ ունին ,
 անձանց իւրեանց իսկ են օրէնք : Որք ցուցանեն զգործս
 օրինացն գրեալ ի սիրտս իւրեանց : Հռովմ . Բ . 14 և 15 :

Հ. Օխճն աւանդեցան բարոյական օրէնք :

Պ. Ի տասն պատուիրանս : (1)

Հ. Օխճն բաժանին այսոքիկ տասն պատուիրանք ընդ-
 հանրապէս :

Պ. Յերկուս յաստուածսիրութիւն և յըն-
 կերսիրութիւն . ուստի և զժագրեալ էին
 յերկուս տախտակս :

Հ. Յորս ի նոցանէ Լստուածսիրութիւնն աւանդի :

Պ. Ի չորս առաջինս :

Հ. Իսկ ընկերսիրութիւնն :

Պ. Ի վեց վերջինս :

Հ. Օխճն պարտ իցէ իմանալ անուամբս ընկեր :

Պ. Օւամենայն մարդ :

Հ. Ի քանիս բաժանին այսոքիկ պատուիրանք ըստ զ-
 րութեան :

Պ. Յերկուս . Ի յանձնառականս և Ի հրա-
 ժարականս . ուստի կատարումն յանձնառակա-
 նին . և խոտորումն Ի հրաժարականէ՝ առաքի-
 նութիւն կոչի . իսկ խոտորումն Ի յանձնա-
 ռականէ և կատարումն հրաժարականին՝ մեղք
 կոչի :

Հ. Որ պատուիրանն է առաջին :

Պ. Ես՝ եմ՝ Տէր Լստուած . քո . մի՛ եղեցին

(1) . Եւ էր Մովսէս առաջի Տեառն . . և գրեաց ի վերայ
 տախտակացն զբանս ուխտի՝ զտասն պատգամացն : Եւլից . ԼԲ . 28 :

քեզ այլ լ'ստուածք բաց յինէն :

Հ. Օրհնչ հրամայէ այս պատուիրան :

Պ. Նախաճեւ սրտիւ և դաւանել բանիւ զմի
լ'ստուած . զնա առաւել քան զամենայն ինչ
յաշխարհի սիրել և յարգել և 'ի նա միայն
յուսակ :

Հ. Որպիսի առաքինութիւնք ստեղծին ի պատուիրանէ
այդի :

Պ. Բարեպաշտութիւն . խոնարհութիւն . յոյս ,
մեծանձնութիւն և նմանիք սոցա :

Հ. Օրհնչ է բարեպաշտութիւն :

Պ. Բարեպաշտութիւն է առաքինութիւն յայ-
տարար ներքին և արտաքին լ'ստուածաշ-
տութեան . (1)

Հ. Խոնարհութիւնն զի՞նչ է :

Պ. Ի անկեղծաւոր ծանօթութիւն տկարու-
թեան անձին և 'ի բոլոր սրտէ խոնարհեցու-
ցումն անձին առաջի լ'ստուածոյ : (2)

Հ. Յոյսն զի՞նչ է :

Պ. Յոյսն է առաքինութիւն և կատարեալ
ապաւինութիւն 'ի խնամն լ'ստուածոյ՝ որ զա-

1 . Միրեցես զհէր լ'ստուած քո յամենայն սրտէ քու մէ և
յամենայն անձնէ քու մէ և յամենայն մտաց քոց : Մատ-
ի . 31 :

2 . Խոնարհեցարուք առաջի Տեառն և բարձրացուցէ զձեզ .
Յալ . 7 . 10 :

մենայն ինչ տնօրինէ մեզ 'ի բարութիւն . (1) :

Հ. Սեփանձութիւնն զի՞նչ է :

Պ. Սեփանձութիւնն կամ արիութիւնն է
առաքինութիւն՝ որով անտրտունջ համբերեմք
յառաջիկայ թշուառութեանց և խոնարհամիտ
սպասեմք ապագայից : (2)

Հ. Որպիսի մեղք հակառակին պատուիրանիս :

Պ. Լ'նաստուածութիւն , բազմաստուածութիւն ,
կեղծաւորութիւն . յանձնապատանութիւն ,
յուսահատութիւն , և որք 'ի սոցա են սակի :

Հ. Օրհնչ է անաստուածութիւն :

Պ. Լ'նհաւատութիւն 'ի գոյութիւն և 'ի նա-
խախնամութիւնն լ'ստուածոյ : (3)

Հ. Օրհնչ է բազմաստուածութիւն :

Պ. Պաշտելութիւն զանազան արարածոց փո-
խանակ լ'ստուածոյ : (4)

Հ. Կեղծաւորութիւնն զի՞նչ է :

Պ. Երախտեմարութիւն արտաքին լ'ստուած-

1 . Յուսով ինդացէք . Հոով . Ժբ . 12 :

2 . Համբեր Տեառն և քաջալերեաց զօրացի սիրտ քո և
համբեր Տեառն . Սաղմ . Իդ . 14 :

3 . Ասաց անզգամն 'ի սրտի իւրում թէ ոչ գոյ Աս-
տուած . Սաղմ . Ժգ . 1 :

4 . Չանուն լ'ստուածոց օտարաց մի միջեցէք . և մի
լուիցի 'ի բերանոյ ձերմէ . Եւր . Իգ . 13 :

պաշտութեան քան ներքնոյն : (1)

Հ. Յանձնապատանութիւնն զինչ է :

Պ. Տարապայման ապաստանութիւնն ՚ի զօրութիւն յանձին, ՚ի պատիւ կամ ՚ի հարստութիւն մոռացութեամբ ամենակարողուն ՚Եստուծոյ : (2)

Հ. Օրինչ է յուսահատութիւնն :

Պ. Ի՞նչ համարութիւն միջոցաց՝ կարգելոց ՚ի խնդիր ողորմութեանն ՚Եստուծոյ : (3)

Հ. Օրինչ գրի երկրորդ պատուիրանն :

Պ. Սի՛ արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան . որ ինչ յերկինս ՚ի վեր և որ ինչ յերկիր ՚ի խոնարհ, և որ ինչ ՚ի ջուրս ՚ի ներքոյ երկրի . մի՛ երկիրպագանիցես նոցա, և մի՛ պաշտեսցես զնոսա :

Հ. Օրինչ արգելու սյս պատուիրանն :

Պ. Տալ արարածոց զ՚Եստուած վայելուչ պա-

1 . Կեղծաւորք . ժողովուրդս այս շրջամբք պատուէ զիս և չիրա իւրեանց հեռացեալ մեկուսի է յինէն : Մատ. Ժե . 8 :

2 . Իմացարուք ամենքեան որոց մոռացեալ իցէ զԵստուած գուցէ երբէք յափշտակիցիք . և ոչ որ իցէ որ փրկիցէ : Սաղմ . խր . 22 :

3 . Երանայնի նեղեալք՝ այլ ոչ նուաղեալք . կարօտեալք՝ այլ ոչ տարակուսեալք . հալածեալք՝ այլ ոչ Լքեալք չարչարեալք՝ այլ ոչ սատակեալք : Կորն . 7 . 8 :

տիւ և սիրել ինչ յաշխարհի երբև զ՚Ծ :

Հ. Որպիսի մեղաց արգելք դնին յոյսմ պատուիրանի :

Պ. Կռապաշտութեան, սնապաշտութեան : շահասիրութեան և որոց ՚ի սոցա են համարի : (1)

Հ. Օրինչ է կռապաշտութիւնն :

Պ. Ի՞նչ պատուածացուցումն կենդանի կամ անկենդան արարածոց ինչ : (2)

Հ. Սնապաշտութիւնն զինչ է :

Պ. Ինչպե՛լ իրաց ինչ կամ ժամանակաց զզօրութիւն իմն կամ զազդեցութիւն ՚ի ներգործութիւնս մեր : (3)

Հ. Շահասիրութիւնն զինչ է :

Պ. Չափազանց հետամտութիւն պատուոյ և հարստութեան իբրև ծայրագոյն երջանկուէ : (1)

Հ. Որպիսի առաքինութիւնք ընծիւղին ՚ի պահպանութենէ պատուիրանիս :

Պ. Փառաւորութիւն անուանն ՚Եստուծոյ :

1 . Սպանէք այսուհետև զանդամն ձեր զերկրաւորս ՚ի բաց ընկեցէք զպոռնկութիւն, զպղծութիւն, զբիծ, զցանկութիւն չարեաց և զագահութիւն, որ է կռապաշտութիւն : Կորն . 4 . 5 :

2 . Այլ զոր զօհնն հեթանոսք՝ դուաց, և ոչ Եստուծոյ զօհն : ա . Կորն . Ժ . 20 :

3 . Մի գտանիցի ՚ի քեզ . . . որ դիւթիցէ զգիւթութիւն, և հմայիցէ և հաւահարց լինիցի, և կախարդիցէ կախարդանօք . և վհուկ և նշանագետ լինիցի . . . քանզի պիղծ է Տեառն ամենայն՝ որ առնէ զայն : Բ . Օրին . Ժ . 10 . 11 . և 12 :

նախանձայուզութիւն օրինաց և նմանիք սոցա :

Հ. Օրինչ է փառաւորութիւն անուան լստուծոյ :

Պ. Լին է՝ զի մեք՝ անուանեալքս երկրպա-
գուք լստուծոյ ճշմարտի վարեսցուք զկեանս
մեր բարեպաշտութիւն ըստ սրբութեան պաշտե-
ցելոյն առ ՚ի մէնջ լստուծոյ : (1)

Հ. Օրինչ է նախանձայուզութիւն օրինաց :

Պ. Լին այն զի գիտացեալ մեր զլստուած-
պաշտուէս մերոյ զճշմարտութիւն մի ու-
րացուք զայն ոչ առ օգտի ինչ և ոչ առ
երկիւղի թշուառութեանց : (2)

Հ. Որպիսի բառիք աւանդի երոզ պատուիրանն :

Պ. Սէ առնուցուս զանուն Տեառն լստու-
ծոյ քոյ ՚ի վերայ սնոտեաց :

Հ. Օրինչ արգելու այդ պատուիրանն :

Պ. Յիշատակել զանուն լստուծոյ վայրապար
՚ի սուտ խոստմունս և յընդունայն երդմունս :

Հ. Որպի մեղք արգելեալք ինչն սովա :

Պ. Հայհոյութիւն, ստերգմութիւն և որք
սոցա են նմանք :

Հ. Օրինչ է հայհոյութիւն :

(1) Ոչ կարեք լստուծոյ ծառայել և մամնայի : Մատ. 2. 24 :

(2) Սուրբ եղիցի անուն քո : Մատ. 2. 9 : Այլ ըստ սրբոյն ու-
կոչեաց զձեզ՝ և դուք սուրբք յամենայն գնացս ձեր լինի-
ցիք : ա. Պետ. ա. 15 :

(3) Յամեն յնի ճգնեաց զգործս աւետարանի գործեալ
զպատան քո կատարեալ կալ : բ. Տիմ. 4. 5 :

Պ. Լին բան նախատանաց ասացեալ ընդդէմ
լստուծոյ, հեգնութիւն հաւատոյ, եկեղեց-
ւոյ և կամ այլոյ ի՞նչ սրբութեան : (1)

Հ. Ստերգմութիւնն զի՞նչ է :

Պ. Լնկատարութիւն բարի խոստմանց՝ հա-
տատելոց երդմամբ : (2)

Հ. Որպիսի առաքինութիւնք շառափղել կարեն ՚ի պա-
ուիրանիս պահպանութենէ :

Պ. Երկիւղ լստուծոյ սանձհարու՜ր լեզ-
ուի, և նմանք սոցա :

Հ. Օրինչ է երկիւղ լստուծոյ :

Պ. Օմտաւածութիւն մեծութեն լստուծոյ (3)
և սրտի մտօք խոստովանութիւն սրբութե նորա : (4)

Հ. Օրինչ է սանձհարութիւն լեզուի :

Պ. Լնութիւն ՚ի խաւելոյ զանպատեհս (5)
ընդդէմ լստուծոյ, հաւատոյ, եկեղեցւոյ
և ամենայն սրբութեան : (6)

(1) Այլ տրտիքը զանիսս անտու՞ն... սրոյ չենն ան-
պատ հայհոյեն յապանմութեան իւրեանց : բ. Պետ. բ. 12 :

(2) Սէ երդնուցուք սուտ յանուն իմ : Ղեւ. մթ. 12 :

(3) Եկիղն իմաստութեան երկիւղ Տեառն : Ստեփ. ա. 7 :

(4) Ետուայեցէք Տեառն երկիւղել ընծացէք առաք-
նորս գործութեամբ : Ստեփ. բ. 18 :

(5) Ի՞նչէ որ բանիւ ոչ յանցանիցէ՝ մտ է մտքդ կատարելու
որ կարող է սանձհարել զամենայն մարմին իւր : Յակ. 4. 2 :

(6) Որ խնայէ ՚ի բերան իւր՝ զանձն իւր սիրէ : Առա. մգ. 3 :

Հ. Օրհնէրդ գրի չորսդ պատուիրանն.

Պ. Յիշեսցիր զօրն շաբաթուց սրբել զնա. զվեց օր գործեսցես և արասցես զամենայն գործս քո. յաւուրն եօթներորդի շաբաթ Տեառն Մատուցոյ քում:

Հ. Օրհնէ հրամայէ Աստուած յայսմ պատուիրանի.

Պ. Ի տօնս Տէրունականս՝ իբրեւ ի Ժամանակս նուիրեալս Մատուցոյ, Թողեալ զամենայն ծառայական գործառնութիւնս և զշահավաճառութիւնս դիմել ի տաճար Մէջ վասն աղօթից և ունկնդրութեան բանին Մատուցոյ. և մեծաջան փութով սրբել զայնոսիկ աւուրս գործովք բարեաց՝ ողորմութեամբ:

Հ. Օրհնէրդ ամաբնութիւնս պահանջէ այդ պատուիրանն.

Պ. Օջերմեռանդութիւն, զողորմութիւն և զնմանիս սոցա:

Հ. Օրհնէ քերմեռանդութիւն.

Պ. Այնչէ պահպանութիւն ամենայն արքայազան արարողութեանց եկեղեցւոյ (1)

(1) Նշաշեմ զձեզ եղբարք գթութեամբն Աստուծոյ՝ պատրաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի, սուրբ հաճոյ Յատուցոյ. զնստուն պաշտմնդ ձեր. Հոգւմ. Ժբ. 4.

Հ. Ողորմութիւնն զի՞նչ է.

Պ. () Գնականութիւն և կարեկցութիւն ընկերին վասն սիրոյն Մատուցոյ. (1)

Հ. Յորպիսի մեղս գլորին անհնազանդք պատուիրանիս.

Պ. Յամբարշտութիւն, ի ծուլութիւն, յընդունայնութիւն և յայլ այսպիսիս:

Հ. Օրհնէ ամբարշտութիւն.

Պ. Յայտնի հակառակութիւն օրինաց և հաւատոց արհամարհութեամբ հանդերձ եկեղեցական արարողութեանց. (2)

Հ. յուլութիւնն զի՞նչ է.

Պ. Օանցառութիւն զպարտաւորութեան լուրջ առ Մատուած, առ ընկերն, և առ անձն իւր. (3)

Հ. Ռնդունայնութիւնն զի՞նչ է.

(1) Գոթե ապա Աստուծոյ. որ ողորմ անունին. ըստ Երեմ. 33. 22. հատուցէ նմա. Առակ. Ժթ. 17.

(2) Երբք սաստիկ պատժոց արժանի համարիցիք զայն. զԱրդին Աստուծոյ առ ոտն եհար. և զարիւն նորոյ ուխտի խառնակ համարեցաւ որով և սրբեցան. և զՀոգին շնորհայ թշնամանեաց. Եբր. Ժ. 29.

(3) Մատուցեալ և որոյ զմի քանքարն տեսալ էր. և առ Տէր... երկեւոյ. գնացի և թագուլի զքանքարն քա յեկի. Բի... պատասխանի եւ Տէրն և տե՛ գնա. Ծառայ քար և վաս. Մատ. Ի. 24. 25. և 26.

Պ. Ինչպիսիքա՞յ պատահումն 'ի հոգւ աշխարհի մինչև ոչ կարել կատարել զօրինադրեալ պաշտօն 'Աստուծոյ: (1)

Հ. Որպէս գրի-հինգերորդ պատուիրեն:

Պ. Պատուեա՞ն զհայր քո և զմայր քո: զի բեզբարի լինիցի և զի երկայնակեաց լինիցիս 'ի վերայ երկրի:

Հ. Օրհնէ հրամայէ Աստուծոյ պատուիրեն:

Պ. Որտի մոտք սիրել և միշտ ներքուստ և արտաքուստ պատուել զծնողս մեր: և անուամբս ծնողք՝ պատուիրէ հնազանդիլ և յարգել զօրս հոգան վասն բարութեան միջակի մէջ ցառս է շնորհաւորս: (2) զհոգեւ եկեղեցւոյ: (3) զքաղաքական իշխանս: (4) զբարերարս և զծերունիս: (5)

Հ. իբրևսի օր ինութիւնք վերնմիւղին 'ի պատուիրեն:

(1). Դու հոգեւ և զբազում իւրք զբաղեալ ես. բայց աստ օտեա ինչ պիտոյ է: Ղուկ. Բ. 41. և 42.

(2). յԱստուծոյ երկերուք. զԹագաւորս պատուեցէք: Թ. զԵս. Բ. 17:

(3). Ունկնդիր լերուք առաջնորդաց 'ի ցն հոգեւոյ կոյցէք նոցա զի նոքա ասին վասն ողւոյ մեր: Եւր. Բ. 17:

(4). Հնազանդ լերուք ամենայն մարդկէն անկախանոյ վասն Տեառն: Թ. զԵս. 13:

(5). Առաջի ալեաց յառնիցես և պատուեսցես զերես, ծերոյն Ղևտ. ԺԹ. 32:

պահպանութենէ:

Պ. Հնազանդութիւն, երախտագիտութիւն և որ 'ի սոցա սակի են:

Հ. Օրհնէ է հնազանդութիւն:

Պ. Կամակար սրտիւ հպատակութիւն հրամանաց իշխանութեանց և պետութեանց: (1):

Հ. Երախտագիտութիւնն զի՞նչ է:

Պ. Եւ որ հապարտուի և յարգուի ցուցեալ ում և իցէ վասն բարերարելոյն մեզ: (2):

Հ. Որպիսի մեղք ծնանին 'ի ցանցապետութենէ զպատուիրենաւ:

Պ. Ընհնազանդութիւն, ապերախտութիւն և նմանիք սոցա:

Հ. Օրհնէ է անհնազանդութիւն:

Պ. Ինքնակամ արհամարհութիւն բարի խրատուց կամ հրամանաց: (3):

Հ. Ապերախտութիւնն զի՞նչ է:

Պ. Իստասիրտ անզգայութիւն ընկալեալ բարե-

(1). Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ է 'ի հնազանդութեան կացցէ: ԶԱՌՄ. ԺԳ. 1:

(2). Աղղչեմ զծեզ եղբայրք ճանաչել զվստակաւորս և զվերակացուս ձեր 'ի Տէր: Թ. Ես. Ե. 12:

(3). Որդի որ թողուցու պահել զխրատ հարխորհի բզ-ճառս չարեաց: ԸԼԱԿ. ԺԹ. 27:

բարութեանց կամ մոռացութիւն երախտեաց: (1)

Հ. Որպիսի բառիւք առաջի դնի վեցերորդ պատուիրանն:

Պ. Սի սպանաներ:

Հ. Օրհն արդելու լստուած ի դիմն պատուիրանի:

Պ. Երգելու ոչ միայն զհարդ և իցէ սպա-
նանել զմարդ. այլ և զմտաւ անգամ ածել
զայնմանէ. ցանկալ մահուան ուրուք. առա-
ւմեք նպաստ ինչ կամ խորհուրդ սպանու-
թեան. նեղել և զրկել զընկերն. կամ ձե-
ռնհաս լինել և կարող օգնել ընկերին և
ջօգնել: (2):

Հ. Որպիսի մեղք արգելեալ լինին այսուիկ պատուիրանաւ:

Պ. Սպանութիւն, անձնասպանութիւն. խառա-
պրտութիւն, վրէժխնդրութիւն և որք ի սոցա
համարի են:

Հ. Օրհն է սպանութիւն:

Պ. Բռնի բարձուան կամ կարճուան կենաց
ընկերին: (3):

(1) . Յոյս անշնորհակալին իբրև զսառն ձմերայնոյ հալեա-
ցի. Իմաստ. Ժ. 29:

(2) . Ըմեն պն որ ատէ զեղբայր իւր՝ մարդասպան է.
ա. Յովհ. 7. 4:

(3) . Մի սպանաներ. զի որ սպանանիցէ՝ պարտական լիցի
Դատաստանի. Մատ. 6. 21:

Հ. Ինչն ասպանութիւնն զի՞նչ է:

Պ. Ինքնակամ բարձուան կամ կարճուան
կենաց անձին: (1):

Հ. Իստարտութիւնն զի՞նչ է:

Պ. Լնդգայութիւն կարեաց ընկերին: (2):

Հ. Ս լրէժխնդրութիւնն զի՞նչ է:

Պ. Յանկութիւն հասուցանելոյ ընկերին չար
փոխանակ չարի: (3):

Հ. Օրհն արգելի առաջին լիւիւս ստեճառէ պատուիրան-
ութիւն պատուիրանիս:

Պ. Օ անյիշարութիւն, զկարեկցութիւն և
զնմանիս սոցա:

Հ. Օրհն է անյիշարութիւն:

Պ. Եանձահարութիւն ցասմական զգայու-
թեանց սրտի և ըղձի վրէժխնդրութե յաղազս
յայլոց կրեալ զըկանաց: (4):

(1) . Զի ոչ որ երբեք ատեայ զանձն իւր. Լ. փետ. 6. 29:

(2) . Յայնժամ ասացէ և ցայնոսիկ՝ որք ընդ աշնկէն ի-
ցեն ելթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենական...
Ի քօղցեայ և ոչ ետուք ինձ ուտել, ծարաւեցայ և ոչ
արուցիք զիս. ստար էի և ոչ ժողովեցիք զիս. մերկ էի.
և ոչ զգեցուցիք զիս. հիւանդ էի և ի բանտի և ոչ տե-
սիք զիս. Մատ. 23. 41. 42. և 43:

(3) . Մի ասիցես թէ առից զվրէժ ի թշնամեցն. այլ
համբեր Տեառն. զի քեզ օգնական լիցի. Մատ. 6. 22:

(4) . Մի յաղթիր ի չարէն. այլ յաղթեալ բարեան չո-
թին. Լ. Լով. 19. 21:

Հ. Լիթերկցութիւնն զի՞նչ է:

Պ. Լիթորդութի կարեաց և առաւապանաց ընկերի: (1)

Հ. Ո՞ր պատուիրանն է եմբնորդ:

Պ. Մի՛ չնար:

Հ. Օ՞րնչ արգելու ըստուած ի պատուիրանս:

Պ. Ի՞նչ գեղու անձնամասն լինել յամբարի կիրս. ի դատարկակեցութիւն, ի զեղխութիւն. ի մեղկութիւն և յանխոհմարտ հետեւութիւն զայնակեցուցիչ օրինակաց: (2)

Հ. Ո՞րպիսի մեղք արգելեալ լինին զայն պատուիրանս:

Պ. Սարմանադութիւն. որ կորստութիւն և այլ այսպիսիք:

Հ. Օ՞րնչ է մարմնամոլութիւն:

Պ. Օ՞րնչ անկատիլ ի սէր հեշտախտութեան այնպէս, մինչև փոխանակ արմատախիլ առնելոյ զայն և ևս զգրգռել: (3)

Հ. Ո՞րպիսիք արգելու զի՞նչ է:

Պ. Շախաղանց կերառութիւն կերակրոց և

(1) Բարդէ կամիք թէ արտօցն ձեզ մարդիկ այնպէս աբաղիք և դուք նոցա: Ուրիշ 31

(2) Սրբեցուք զանինս մեր յաւնսյն պրծութենէ մարմնոյ և հոգւոյ, կատարեցուք զսրբութիւն ահիւն Երուսաղէմի: Բ. ԿճԻ. է. 1

(3) Զի եթէ ըստ մարմնոյ կեցիք՝ մեղանկոց՝ էք: Զոգլ՝ Ը. 13:

ըմպելաց. և սանձարձակ թոյլտուութի վատթար հակամիտութեանց: (1)

Հ. Ո՞րպիսի առաքինութիւնք ստեղծին ի պատուիրանս պահպանութենէ:

Պ. Ո՞րքութիւն, ժողովարար և այլ այսպիսիք:

Հ. Օ՞րնչ է սրբութիւն:

Պ. Պահպանութիւն անարատութեան սրտի և անապականութեան վարուց: (2)

Հ. Ժողովարարութիւնն զի՞նչ է:

Պ. Սանձարկութիւն վատթար հակամիտութեանց և պահեցողութիւն յաւերորդութենէ ի կերակուրս և յըմպելիս: (3)

Հ. Օ՞րնչ արգելու զի՞նչ է պատուիրանս:

Պ. Մի՛ գողանար:

Հ. Օ՞րնչ արգելու ըստուած գողին պատուիրանս:

Պ. Ի՞նչ գեղու, սեպհականել զի՞նչ և իցէ զօտարին յայտնի կամ ի ծածուկ, բռնի կամ խաւանակութեամբ. առնուլ զվարձ աշխատութեան ի վեր քան զարժանն, կամ վաճա

(1) Զգոյշ լերուք անձանց. գուցէ ծանրանայցն սիրաբէր շուայտութեամբ և արեցութեամբ և հոգւովք աշխարհականօք: ՂԵԿԻ. Ե. 34

(2) Իպիկեթ հոգւով զգործս մարմնոյ սպաննիցք կեցիք: Զոգլ. Ը. 13

(3) Զգաւարտարուք աշխատեալ և լերուք զուարթութեամբ: ՊԵՄ. Ը. 7

ուել զգին՝ աւելի քան զյարգն, զգտեալ էրս
իւրացուցանել. ոչ յետս առաջ զիւր ինչ յա-
նօթ առեալ: (1)

Հ. Որպիսի մեղաց արգելք դնին ՚ի օմն պատուիրանի:

Պ. Հախճապարութեան, զօշաքաղութեան և
բոց ՚ի սոցա սակի են:

Հ. Օ ինչ է յախճապարութիւն:

Պ. Հորթութեան իրաց ընկերին եթէ բռնի և
եթէ խորամանկութեամբ: (2)

Հ. Օ օշաքաղութիւնն զինչ է:

Պ. Ենթադրանկութիւն ժողովելոյ զինչս ամենայն
և և ապօրինաւոր հնարիւք: (3)

Հ. Որպիսի առաքինութեանց պատճառ լինի պատուի-
րանից պահպանութիւն:

Պ. Հախճապարութեան, անշահասիրութեան և
նմանեաց սոցա:

Հ. Օ ինչ է չափօտութիւն:

Պ. Հատանալ իւրովք սեպհական ստացուա-

(1). Փոխառնու մեղաւորն և ոչ հատուցանէ: Սաղմ. 17. 28.

(2). Մի զանցանել և զրկել յիրից յայդմիկ զեղբայր
իւր քանի վրէժխնդիր է հէր ՚ի վերայ ամենայնի պղո-
րիկ: Թ. Բ. Ե. Գ. 6.

(3). Միմտ ամենայն չարեաց առաքինութիւն է որով
օմնաց ցանկացեալ վրիպեցան ՚ի հաւատաց Թ. Բ. Ե. Գ. 10.

Ժողովութե և ասկաւք իցեն՝ առանց ջանալոյ
յախճապարութե զինչս յօտարէ: (1)

Հ. Օ անշահասիրութիւնն զինչ է:

Պ. Ենթադրանկ լինել յամենայն իրաց օտարին
և և ՚ի կարեւն տիրել նոցա: (2)

Հ. Օ ինչ արգելք գրի իններորդ պատուիրանն:

Պ. Մի սուտ վկայութի վկայեր զընկերէ քու մէջ:

Հ. Օ ինչ արգելք աստուած յայտ պատուիրանի:

Պ. Երգելու վկայել ստուգութեամբ ՚ի վնաս
ընկերին, դնել զմեղս իւր յայլոյ վերայ. զըր-
պարտել զանպարտն և բանբասելով հրապարա-
կել զյանցանքս այլոց:

Հ. Որպիսի մեղք արգելեալ լինին պատուիրանաւ:

Պ. Ենթադրանկութեան, չարախօսութեան, հը-
պարտութեան և ուրք զայսր կնի կարգին:

Հ. Օ ինչ է անիրաւութիւն:

Պ. Գիմարդարձութիւն ճշմարտութե ՚ի գործս
և ՚ի բանս: (3)

(1). Ըստ լիցին ձեզ թողանքն ձեր. Ղուկ. Գ. 14.

(2). Զգրաւ պարտապանին ՚ի բաց տայցէ և զյախճա-
պարութե գործուցանիցէ. կելով կեցցէ: Եղեկ. Գ. 15.

(3). Որ սիրէ զմեղս. (զանիրաւութիւն) ատեալ զանձն իւր
Պաղմ. Ժ. 6.

Հ. Չարժասութիւնն զի՛նչ է.

Պ. Տարադարա բաժնաւորք զընկերէ և հրա-
տարակութիւն մուլութեանց նորա: (1)

Հ. Հարսութիւնն զի՛նչ է.

Պ. Հանիրաւի սեփականութի պատուոյ ան-
ձին, հանդերձ արհամարհութիւն ընկերին: (2)

Հ. Որպիսի առաքնութիւնք շառաւիղին ՚ի պատուիրա-
նիք պահպանութենէ.

Պ. Ըրդարութիւն, քաղցրութիւն, հեղութի
և այլ այսպիսիք:

Հ. Օրհնէ և արգարութիւն:

Պ. Պահպանութիւն իրաւաւոր, ՚ի բան և
՚ի գործս: (3)

Հ. Վաղցրութիւնն զի՛նչ է.

Պ. Ոսկորութիւն լուելոյ զվաղթար լրոց զըն-
կերէն և մի՛շտ բարիս խօսելոյ զայլոց: (4)

Հ. Հեղութիւնն զի՛նչ է.

(1). Մի բաժնաւոր զմեծանս և յորաք. Յակ. Գ. 11.

(2). Պարծիք յամբարտաւանութեան ձեռն. ամենայն
այսպիսիք պարծանք չարութեան են. լնդ. 16.

(3). Ընկեցէք զչարիս յանձանաց ձերոց. փնդրեցէք զի-
րաւանս, փրկեցէք զպրկեալն, դատաւարութիւն քրդոյն, և
տուր իրաւունս յորոյն. Եսայ. Թ. 16. 17.

(4). Մի զոր հայհոյել՝ անկողիս լինել, հեղք. ամենայն
ցածութիւն առ ամենայն մարդիկ ցուցանել. Երա. Գ. 2.

Պ. Ընկալար բանաւորք ոգւոյ և յո՛ւրաւի
ներեղոյ ցնցանայ և ակարւն ընկերի: (1)

Հ. Օրհնագ զրի տառերորդ պատուիրանս.

Պ. Մի ցանկնաւոր տան ընկերի քոյ, և մի
անդոյ նորա. մի՛ ցանկանաւոր կնոջ ընկերի քոյ.
և մի՛ ծառայի նորա. և մի՛ աղախնոյ նորա. և
մի՛ եղին նորա. և մի՛ իշոյ նորա. և մի՛ ամե-
նայն անամնոյ նորա. և մի՛ ամենայնի՛ զինչ
ընկերի քոյ իցէ:

Հ. Օրհնէ արգելու քառաւ յայտ պատուիրանի.

Պ. Օ ամենայն չար ցանկութիւնս արտի և
զամենայն տողիւտ հակամարտութիւնս կամաց
և հրամայէ ոչ միայն ջառնել զըկանս ինչ
ընկերին. այլ և ոչ իսկ խորհիլ. ոչ միայն
չանփականիլ ինքեան զօտարին այլ և չցան-
կաւ սեպհականելոյ:

Հ. Որպիսի մեղք արգելնալ լինին պատուիրանս.

Պ. Ինքնասիրութեան հոգութի և նմանիք սոցա.

Հ. Օրհնէ և ինքնասիրութիւն.

Պ. Ինքնասիրութիւն թող տալոյ ինքեան և հաւա-
նելոյ ընդ պարզութեամբ զեղծ կամաց իւրոց: (2)

(1). Ներել միմեանց. շնորհել իրեաց, եթէ ուրաք գը-
մեքէ արտունջ ինչ իցէ. Կրդոս. Գ. 13.

(2). Մի պատահեալ իմագաւորեցեն մեղք ՚ի մահկանացոյ
մարմինս ձեր՝ հնազանդիլ ցանկութեանց նորա Լուսին. Լ. 12.

Հ. ԼՆ հոգութիւնն զի՛նչ է.

Պ. ԼՆ փոյթութիւն զուղղութենէ մօլեկան
հակամիտութեանց և զանհետ առնելոյ զա-
նօրէն ցանկութիւն. (1)

Հ. Օրպիսի առաքինութիւնս հրամայէ պատիրածու-
նել.

Պ. Օարթնութիւն, զանձնուրացութիւն. և այլն.

Հ. Օինչ է արձնութիւնն.

Պ. ԼՆ դադար մտադրութիւն գործոց իւրոց
և յօժարութեանց, առ ՚ի գիտել թէ իցե՞ն
նոքա ըստ ԼՆ տուածահրաման օրինաց. (2)

Հ. Օինչ է անձնուրացութիւն.

Պ. Սանք արմատքի խելոյ զընդաբոյս վատ-
թար ցանկութիւնս մեր. (3)

Հ. Սեղք ՚ի բանիս բաժանին.

Պ. Յերկուս, ՚ի ներելիս և ՚ի մահացուս. (4)

Հ. Ոյք են ներելքն.

Պ. ԼՆ յոքիկ՝ յորժամ ըստ տգիտութեան,

(1) Մի զքնով անկանիցիմք որպէս և այլք. ՄԱ որ-
թունք և զուարթունք եղիցուք. ա. Թ. Ե. Ե. 6.

(2) Տեսիլք որպէս ճշմարտիւ գնացէք. մի իբրև անիմաք
ՄԼ իմացութեք զինչ կամք են Տեառն. Եփես. Ե. 13. 17.

(3) Որք քրիստոսեանքն են. զմարմնս իւրեանց ՚ի խաչ հա-
նքն կարեօք և ցանկութեամբ հանդերձ. Գաղ. Ե. 24.

(4) Են մեղք՝ որք մահուապիք են և են մեղք՝ որ ոչ
առ ՚ի մահ. Ե. Թովհ. Ե. 17. 16.

ըստ տարակուսուէ, կամ անմտաբար յան-
կարծահաս դիպուածով իւրիք զանց զօրինօք
առնեմք. (1)

Հ. Մահացուքն ոյք են.

Պ. ԼՆ յոքիկ՝ յորժամ տիրապէս տեղեակք
գործով օրինաց, ոչ միտ եղեալ յանդիմա-
նութեան խղճի մտաց՝ կամաւոր յօժարութե-
ք գործեմք զլարիս. (2)

Հ. Օինչ է ուխտն Աւետարանական.

Պ. Շնորհաձիր խոստումն ԼՆ տուծոյ վասն
հաւատոցն ՚ի Վրիստոս Յիսուս՝ փրկուէ. (3)
որդեգրութեան. (4) և ժառանգուէ կենա-
ցըն յաւիտենից. (5)

Հ. Օինչ զանգա ութիւն է ՚ի մէջ օրինակած և
Աւետարանական ուխտի.

Պ. ԼՆ զի ուխտն օրինաց պահանջէ զկա-

(1) Մտայ որ ոչ գիտիցէ զկամս Տեառն իւրոյ և որժամի
գանի ինչ գործիցէ արքցէ գան սակաւ. Ղուկ. ԺԲ. 47. 48.

(2) Եւ Մտայ՝ որ գիտիցէ զկամս տեառն իւրոյ և ոչ պատ-
րաստեացէ ըստ կամայ նորա արքցէ գան բազում. Անդ. ԺԲ. 47.

(3) Աւետարանն քրիստոսի զօրութիւնն Աստուծոյ Ե ՚ի
փրկութիւն ամենայն Հաւատացելոց. Հռովմ. ա. 16.

(4) Ոյք ընկալանն զնս. ետ նոցա իշխանութիւն որդիս Ե-
սուծոյ ինն՝ արոց հաւատացեցն յանուն նորա. Թովհ. ա. 1. 12.

(5) Կեանս յաւիտենականն ետ մեզ Աստուած. և այս, են
կեանքն, որ յորդին նորա են. զի հաւատացեցէք յանուն
նորդոյն Աստուծոյ. ա. Թովհ. 11. 13.

տարու մէ պատուիրանաց անթերի(1)խակ աւել-
տաբանականն պահանջէ հաւատոս ի (2)հաւու-
Վրիստոս Փրկիչ մեր, զմեզ արեամբ իւրով
յամենայն մեղաց սրբեաց(2)

Հ. Օրհնէ է հաւատն կենդանի:

Պ. Լ՛յն է՝ յորժամ մարդն սրտի մտօք հաւատացեալ յԼ՛ւետարանին ճշմարտութիւն, և ըստ կարի զօրէնս կատարեալ, յուսայ ընդունիլ զքաւութիւն մեղաց իւրոց յԼ՛ւյ յանուն Վրիստոսի: (1)

Հ. Սասն է՞ն կենդանի կոչի պսալիսի հաւատ:

Պ. Եւսի՛ զի արդեամբքն Վրիստոսի արդարացուցեալ զմարդն առաջի Լ՛ստուծոյ, կենդանացուցանէ զնա ՚ի մեռելութիւն մեղաց: (2) Երկրորդ՝ զի մնայ ՚ի մարդում, ոչ առանց ներգործութեան, այլ պտղաբերէ զառաքելութիւնս: (3)

Հ. Օրհնէ նշանակէ սուտ կամ մեռեալն հաւատ:

Պ. Նախաջեւ և խոստովանիլ զԼ՛ւետարանալ

(1) Եւ եթէ Հայր կոչիցէք զայն որ առանց ակնառութեան դատէ ըստ իւրաքանչիւր գործոց, ապա երկիւղել զձերոյ պանդխտութեան ժամանակս գնացիք: և զի փրկեցալք պատուական արեամբն քրիստոսի: և որք նոյնալ հաւատացիք յԱստուած զի հաւատքն ձեր և յոյս իցեն յԱստուած: ա. Պետ. ա. 17. 18. 19. և 21:

(2) Աստուած որ մեծն է ողորմութեամբ. զմեզ մինչդեռ մեռելաք էաք ի մեղս մեր, կենդանիս արար ի քրիստոս: Եփես. բ. 4. և 5:

(3) Հաւատքն եղեն գործակիցք գործոց նորա և ՚ի գործոց անտի հաւատքն կատարեցան: Թադ. բ. 22:

կան ճշմարտութիւն և ոչ ըստ այնոցիկ վարիլ: (1)

Հ. Լ՛յն վան մեռեալ կոչի պսալիսի հաւատ:

Պ. Սասն այնորիկ՝ զի ոչ գործակցեալ մարդոյն ՚ի հանդիսի առաքելութեան, ոչ առաջ նորդէ նմա առ կեանս յաւիտենից: (2)

Հ. Որպիսի հաւատ պահանջի ՚ի քրիստոնէէ:

Պ. Նշմարիտ և կենդանի զի դաւանութիւն հաւատոց և պատուիրանացն պահպանութիւն ըստ կատարեցին օրէնք Լ՛ստուծոյ: (3)

Պ. Լ՛ստուծոյ:

Յաղագս եկեղեցւոյ Աստուծոյ:

Հ. Որ՞ալ աւանդեաց Աստուած զուստն Աւետարանական:

Պ. Եկեղեցւոյ: (4)

(1) Դու հաւատաս՝ զի մի է Աստուած. բարեօք առնես և գեւք հաւատան և սարսին: Թադ. բ. 19:

(2) Տեսանէք զի ՚ի գործոց արդարանայ մարդ և ոչ ՚ի հաւատոց միայն... զոր օրինակ մարմին տուանց հոգւոյ մեռեալ է, սոյնպէս և հաւատք առանց գործոց մեռեալ են: Թադ. բ. 24. և 26:

(3) Իսկ որ յառեալ ՚ի կատարեալ օրէնս ազատութեան հայիցի, և ՚ի նմին կացէ՝ ոչ եղև նա լսող մոռացութեան՝ այլ առնող գործոյն. նա յառնելն իւրում լիցի երանելի: Թադ. ա. 25:

(4) Այս է ուխտն՝ զոր ուխտեցից ասնդ Խորայէլի յետ աւուրցն այնոցիկ՝ ասէ Տէր. տաց զօրէնս իմ ՚ի միտս նոցա, և ՚ի սիրտս նոցա գրեցից զնոսա: Երեմ. լա. 33:

Հ. Օրհն է եկեղեցին:

Պ. Սողոմ ճշմարիտ հաւատացելոց ՚ի Վրս:

Հ. Վարձեալ զմարդ Կոյն եկեղեցին յառաջագոյն շունչ գիրս:

Պ. Երբեմն անուանի խորհրդանշան մարմինս որոյ գլուխ Վրիստոս է. (1) երբեմն հօտ (2) որոյ հոյիւ Վրս է. (3) երբեմն տաճար հոգեւոր (4) որոյ հիմն Վրիստոս է. (5)

Հ. Օրհն գրի ՚ի հանգանակի զեկեղեցւոյ:

Պ. Իննեւորորդ անդամ. Հաւատամբ և ՚ի մի միայն ընդհանրական և լուսաբեւոյն եկեղեցի:

Հ. Օրհն նշանակէ հաւատալ յեկեղեցի:

Պ. Եւանակէ ոչ միայն զլստուածային վարդապետութիւնս որ բացերեւակի մեզ առաջի դնին յլստուածագիծ տառան, այլ և զոր ինչ միանգամ լուսաբեւոյն անգիր աւան:

(1). Նա (այսինքն քրիստոս) է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ. Կորն. ա. 18:

(2). Ունարբ իմ ձայնի իմում լսեն. Բովհ. ժ. 27:

(3). Ես եմ հովիւն քաջ. Բովհ. ժ. 11:

(4). Ոչ գիտէք եթէ տաճար էք լստուծոյ. Կորն. գ. 18:

(5). Չհիմն այլ դր ոչ կարէ դնել քան զեկեղեցւոյ որ է Թիոուս քրիստոս. Կորն. գ. 11:

գութեամբ և յիջորդք նոցա սուրբ Հարբ և յարդապետք եկեղեցւոյ սահմանեցին ՚ի ժողով. խոստովանիլ աներկեան ճշմարտութեան կատարել ջերմեռանդութեամբ:

Հ. Ս. ամեն է՞ր մի միայն սպի եկեղեցին:

Պ. Բնո միութեան հաւատոյ՝ զի հարկ է եկեղեցւոյն համաձայն լինել ՚ի դաւանութեան:

(1) ըստ միութեան յուսոյ՝ որոյ առարկայն վասն ամենայն հաւատացելոց պարտի լինել ժողովութիւնն միայն (2) ըստ միութեան սիրոյ՝ որով հարկէ ամենայն հաւատացելոց յոգիլ ՚ի մի. (3) ըստ միութեան հոգւոյ համօրէն հաւատացելոց ընդ Տեառն. (4) և ըստ միութեան դիմոյ նորին Վրիստոսի. (5)

(1). Սի գէր. մի հաւատ. եփես. գ. 3:

(2). Որպէս և կոչեցաք ՚ի մի յոյս կոչման ձերոյ. եփես. գ. 4:

(3). Անտալ միմեանց սիրով. փութալ պահել զմիաբանութիւն հոգւոյն յոգիլ խաղաղութեան. եփես. գ. և 23:

(4). Եւ որ մերձեցայ ՚ի գէր. մի Հոգի է. Կորն. գ. 17:

(5). Եւ զամենայն ինչ հնազանդ արար (Լստուած) ՚ի ներքոյ ասից նորա (քրիստոսի) և զնա եղ գլուխ Կերայ ամենայն իրիք եկեղեցւոյ. որ է մարմին նորա. եփես. ա. 22. և 23:

Հ. Ռ. Նդէ՞ր սուրբ կոչի եկեղեցին:

Պ. Քանզի Քրիստոս արեամբ իւրով հեղ-
լով 'ի խաչին՝ սրբեաց զամենայն ճշմարիտ
հաւատացեալս յամ մեղաց աղտեղութենէ: (1)

Հ. Լ. Նր վասն ընդհանրական անուանի:

Պ. Ռ. Նդհանրական և կաթողիկէ անուանի զե-
ռչ 'ի տեղւոջ ինչ ուրեք ամփոփի, այլ փա-
ռաւոր հանդիսանայ ընդ ոլորտս տիեզերաց: (2)

Հ. Ս. Լ. Կան է՞ր Առաքելական ասի:

Պ. Ս. Լ. Կան յամենայնի զհետ երթալոյ Ղապե-
լական վարդապետութեան, և միշտ անփո-
փոխ ունելոյ զայն: (3)

Հ. Ս. Լ. Կան է՞ր զեկեղեցի մեր ուղղափառ լինել հաւատմբ:

Պ. Ս. Լ. Կան անստերիւր զհետ երթալոյ նորա
վարդապետութեան Ղստուածաշունչ պատ-
գամաց, աւանդութեանց Ղապելոց, և կանո-
նաց տիեզերական ժողովոց:

Հ. Օ. Ռ. Նչ է բարեկարգութիւն եկեղեցւոյ:

Պ. Ս. Ռ. Կան և միախոհ դաւանութիւն հա-

(1) Որպէս և Քրիստոս սիրեաց զեկեղեցի. և զանձն իւր
մատնեաց վասն նորա. զի զնա սրբեաց: Լ. Բ. Ե. 25 և 26:

(2) Տուր տանել առ եօթն եկեղեցիսն՝ որք են յԱսիայ,
Եփեսոս, և 'ի Զմիւռնիա... Թայտ. ա. 11:

(3) Ընկալի 'ի վերայ հիման առաքելոց և Մարգարէից.
Եփես. բ. 20:

ւատացելոց և պահպանութիւն սրբազան արա-
րողութեանց: (1)

Հ. Ռ. Նչ է կառավար եկեղեցւոյ:

Պ. Ռ. Նչ է կառավար եկեղեցւոյ
Քրիստոս է, որ խոստացաւ անանջատ մնալ
'ի հաւատացելոց իւրոց մինչեւ ցկատարած
աշխարհի: (2) սակայն կացոյց 'ի կառավարութի-
ն եկեղեցւոյ զսպասաւորս նորոյ ուխտի և զհա-
զարապետս խրհրդոց նորա: (3)

Հ. Օ. Ռ. Նչ է պաշտօն շուրջաց եկեղեցւոյ:

Պ. Քարոզել զբան Տեառն հաւատացելոց: (4)
մատակարարարել զխորհուրդս, (5) և հեր-
բել զհերձուածս: (6)

(1) Զի ոչ եթէ խռովութեան է Եստեւած՝ այլ խաղաղու-
թեան... և ամենայն ինչ ձեր պարկեշտութեամբ և ըստ
կ'որդե լինիցի: Կորն. դ. 33 և 40:

(2) Եւ ահա առիկ եւ ընդ ձեզ եմ զամենայն աւուրս,
մինչև 'ի կատարած աշխարհի: Մատ. Լ. 20:

(3) Զորոյ կացեք անձանց՝ և ամենայն հօտիգ՝ յորում
եղ զձեզ շուրջն սուրբ տեսուչս հովուել զժողովուրդ
Տեառն: Կորն. Բ. 28:

(4) Եւ զուրբարողած զբանն հաս 'ի վերայ ժամու և
տարածման: Բ. Տիմ. դ. 2:

(5) Եւ յայնչ համարեցին զմեզ մարդիկ իբրեւ պաշտօ-
նեայս Քրիստոսի և հազարապետս խորհրդոցն Աստուծոյ,
ա. Կորն. դ. 1:

(6) Պարտ է Եփեսոսացիս... վերակացու լինել հաւա-
տարիմ բանին վարդապետութեան... և զհակառակորդսն
կշտամբել: Եփմ. 7 և 9:

7) Եւ պաշտօնի հաշտութիւն
Եւ իւր փութիւնը: Եւ 18:

Հ. Օւրն է հերթաւն:

Պ. Լարծիբ կամ վարդապետութիւն հակա-
աակ բանին լստուծոյ, հիմնեալ 'ի Թիւր և
'ի ստեղծութեան սուրբ գրոց: (1)

Հ. Օւրն փոքր լինի եկեղեցոյս 'ի հերթաւնոց:
Պ. Տարաձայնութիւն 'ի դաւանութեան և
պառակտումն եկեղեցւոյ:

Հ. Օւրն մարմն է լուծանել զլրջիմ հրճուածոց:
Պ. Բնդհանրական ժողովով Հովուաց և
վարդապետաց եկեղեցւոյ և ոչ միով ու
մամբ 'ի նոցանէ: (2)

Հ. Օւրն 4 չին այսօրիկ ընդհանրական ժողով և
փոքր եկեղեցւոյ:

Պ. Տիեզերական ժողովք:

Հ. Ուստի՞ սկսանին այսօրիկ տիեզերական ժողովք:

Պ. յՆաքելոց անտի՝ որք զտարաձայնութեան
հրէից ընդ նորինծայ հեթանոսս քրիստոնէից
յաղագս զհետ երթալոյ աւանդութեանց հոյ
աւստի, ժողովեալ յերուսաղէմ, միաբան
խորհրդով լուծին, և սահմանեցին ազատ լի-

(1). 'ի ձեզ լինիցին սուս վարդապետք՝ օպրդեալ որք
մուծանեն հերթաւն կորստեան. Բ. Պետ. Բ. 1.

(2). Ամենայն մարգարէութիւն իւրոց գրոց լուծուած ոչ
միայն. Բ. Պետ. Բ. 20.

նել քրիստոնէից յայնցանէ: (1)

Հ. Վանի տիեզերական ժողովք եղեն ցոյսոր ժամանակ:

Պ. Հայք ընդունին զերիս միայն՝ զլիկիոյ,
զլոստանդնուպոլսի և զլիկիստի, իսկ
Յայք ընդունին զեօթն:

Հ. Լորն և վան էր եղև առաջին ժողովն տիեզերական:

Պ. Յամի Տեառն 323. առ կայսերութեամբ
կոստանդիանոսի մեծի 'ի լիկիայ գումարու-
թեամբ 318. Հայրապետաց սրբոց դատաւար-
աեցաւ աղանդն լորնոսի՝ որ ուսուցանէր ոչ
գաւանել զլիսուս Վրիստոս լստուած,
և յորինեցաւ հանգանակն հաւատոյ:

Հ. Լորն և վան էր եղև երկրորդ ժողովն տիեզերական:

Պ. Յամի Տեառն 381. առ իշխանութեամբ
Թէոդոսի մեծի 'ի կոստանդնուպոլսի. ժա-
ղովմամբ 150. Հայրապետաց սրբոց դատա-
ւարտեցաւ աղանդն Սակեդոնի, որ ուրանայր
զլստուածութիւն Հոգւոյն սրբոյ. և սահ-
մանեցաւ դաւանել զնա համապատիւ Հոգ
և Որդւոյ:

Հ. Լորն և վան էր եղև երրորդ ժողովն տիեզերական:

(1). եւ ժողովեցան լուսաբեալք և երկուք տեղանել
վան բանիս այսօրիկ. Գործ. Ժե. 6.

Պ. Յամի Տեառն 431. առ Կայսերութեամբ
Թէոդոսի փոքրու յԼիւեոսս քաղաքի ժողով
վով 200. Հարց սրբոց դատապարտեցաւ ա-
ղանդն Նեստորի՝ որ ուսուցանէր դաւանել
ի Վրիստոս զերկուս դէմն կամ զերկուս
անձնաւորութիւնս ի միում բնութեան. և
հաստատեցաւ խոստովանել ի մի անձն նորա
զԼստուածային և զմարդկային բնութեանցն
զմիաւորութիւնս :

Հ. Երբ և վասն էր եղև չորրորդ ժողովն :

Պ. Յամի Տեառն 453. ի Վաղքեդոն առ
Կայսերութեամբն Սարկիանոսի. գումարու-
թեամբ 600. Հարց՝ որք դատապարտեցին զա-
ղանդն Եւտիքականաց զմի շփոթեալ բնու-
թիւն ի Վրիստոս քարոզողաց :

Հ. Երբ և վասն էր եղև հինգերորդ ժողովն :

Պ. Յամի Տեառն 553. ի Կոստանդնուպօլիս
ի ժամանակս Յուստինիոսի Կայսեր ժողով-
մամբ 165. Հարց դատապարտեցան մոլորու-
թիւնքն Որոգինեայ և հաստատեցան ամենայն
կանոնք առաջնոց ժողովոց :

Հ. Երբ և վասն էր եղև վեցերորդ ժողովն :

Պ. Յամի Տեառն 680. ի Կայսերութեան Կոս-
տանդինոսի Պապանոսի ի Կոստանդնուպօ-
լիս ժողովով 170. Հարց դատապարտեցաւ

աղանդն միակամադաւանից՝ որք ուսուցանէ-
ին դաւանել ի Վրիստոս զմի կամն միայն
ըստ Լստուածութեանն :

Հ. Երբ և վասն էր եղև եօթներորդ ժողովն :

Պ. Յամի Տեառն 787. առ Կայսերութեամբ
Կոստանդինոսի փոքրու ի Նիկիա՝ գումար-
ութեամբ 367. Հարց դատապարտեցաւ ա-
ղանդն պատկերամարտից և հաստատեցաւ
յարգութիւնս պատկերաց :

Հ. Հարկ իցէ սուրբ համարել զհանոնս եկեղեցւոյ :

Պ. Լներկմիտ. քանզի Փրկիչն իսկ զանար-
գուս կանոնաց եկեղեցւոյ ի դատապարտու-
թիւն մատնէ հաւատար անհաւատից : (1)

Հ. Հնար իցէ գտանել զարքայութիւն լստուծոյ աբ-
տաբոյ կամ առանց եկեղեցւոյ :

Պ. Ո՛չ. քանզի առանց ընդունելութեան առ
ի Փրկչէն աւանդեալ խորհրդոց չիք յոյս
փրկութեան. իսկ խորհուրդքն մատակարարին
միայն ի ձեռն Հովուաց եկեղեցւոյ :

(1) Եպա եթէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ որ եղևի քեզ
իրրև զհեթանոսն և զմարտաւորս Յատ. Ժը. 17 :

ԳԼՈՒԽ Թ

ՅԵՂԱԳԱ ԽՈՐՀՈՐԴԵՐ

Հ. Օրինք են խորհուրդք:

Պ. Խորհուրդք կոչին այնպիսի սրբադաս գործողութիւն, յորս ՚ի ձեռն երեւի նշանաց ինչ պարգևի հաւատացելոցն աներկութեամբ շնորհքն լստուծոյ:

Հ. Ս ան էր յընդունելութիւն շնորհաց աստուծոյ քրիստոս զխորհուրդս:

Պ. Ս ան այնորիկ զի ընդունելութիւն խորհուրդ ցուցցուք զհաւատս մեր առ լստուած. և երեւի նշանօք նոցա աներկմիտ լիցուք զընդունելութենէ շնորհաց:

Հ. Վանի՞ խորհուրդք են յեկեղեցւոյ:

Պ. Լօժն մկրտութիւն, դրօշ, հաղորդութիւն, պաշտարութիւն, ձեռնադրութիւն, պսակ, և վերջին օծումն:

Հ. Ս օրինակ յարգոյք են այս ամենայն խորհուրդք:

Պ. Յարգոյք են վասն այնորիկ զի ամենեքն ծառայեն յընդունելութիւն շնորհաց. բայց ոմանք յայսցանէ միայն օգտակարք են. այլք հարկաւորք, և ոմանք կարեւորք յոյժ առ փրկ

կութիւն:

Հ. Ս ք ՚ի խորհուրդք են կարեւորք յոյժ և փրկութիւն:

Պ. Ս կրտութիւն և հաղորդութիւն:

Հ. Օրինք մկրտութիւն:

Պ. Ս կրտութիւնն է խորհուրդ, յորում ՚ի լուանիլ մարմնոյն ջուրք՝ լուացեալ լինի հոգի հաւատացելոյն շնորհօք կամ արեամբն Վրիստոսի:

Հ. Յաւանք եղաւ խորհուրդս այս:

Պ. ՚ի Յիսուսէ Վրիստոսէ. որ պատուէր եւս լուարելոցն. Վնալ և աշակերտել զամհեթանոսս մկրտելով զնոսս յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: (1)

Հ. Օրինք պահանջի ի մերձեցելոյն առ այս խորհուրդ:

Պ. Տեղեկութիւն լուեալարանական հաւատոց. սրպէս հրամայեաց Փրկիչն. Վարդեցեք զլուեալարանն ամ արարածոց, որ հաւատայ և մկրտիցի կեցցէ: (2)

Հ. Ս ան էր մատակարարի մկրտութիւնն աղայոց:

Պ. Ր ան հաւատոց ծնողաց նոցա և կնքահարց որք պարաւանդին հրահանգել զնոսս ՚ի գիտութիւն օրինաց քրիստոնէութեան, զայդպիսի

(1) Մատ. ԺԸ. 19.

(2) Մարկ. ԺԷ. 15 և 16.

իջ մերժէ Վերկէն յեկեղեցւոյ իւրոյ : (1)

Հ. Օ խորդ կատարի մկրտութիւնն :

Պ. Սկրտեան ընկղմի երիցս 'ի ջուր յասել քահանային . մկրտի ծառայոս Մատուծոյ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ :

Հ. Օ ինչ նշանակէ մկրտիլն յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ :

Պ. 'Լշանակէ նուիրել զամենայն ժամանակս կենաց 'ի ծառայութիւն միասնական սուրբ Լորորդութեան : (2)

Հ. Օ ի՞նչ գրի զմկրտութենէ 'ի հանգանակի :

Պ. Տասներորդ անգամ . (Հաւատամք) 'ի մի մկրտութիւն , յապաշխարութիւն , 'ի քաւութիւն և 'ի Թողութիւն մեղաց :

Հ. Օ ի՞նչ խոստովանիմք ըստ այդմ անդամոյ հանգանակիդ :

Պ. Ի՞նչ միանգամ ընկալեալ և ոչ երբէք վասն զինչ և իցէ պատճառի կրկնեալ խորհուրդ մկրտութեան , ծառայէ հաւատացելոյն 'ի քաւութիւն մեղաց :

Հ. Ստան է՞ր մկրտութիւնն կարեւոր յոյժ համարի առ փրկութիւն :

(1) Թոյլ տուք մանկուոյդ . և մի արգելուք զդոսա գալ . առիթ . զի այգալիսեացդ է արքայութիւն երկնից : Մատ. Ժ. 14

(2) . Եթէ դք կամի գալ զկնի իմ . ուրացի զանձն իւր . Մարկ . Ը . 34 :

Պ. Բայտ Վերկէն բանի . Եթէ դք ոչ ծնցի 'ի ջրոյ և 'ի հոգւոյ , ոչ կարէ մտանել յարքայութիւն Մատուծոյ . (1) քանզի առ 'ի քաւութիւն սկզբնական մեղաց , զոր մեղաք Մաւ , չէք այլ ինչ հնար բաց 'ի մկրտութիւն :

Հ. Որ խորհուրդ է դարձեալ կարեւոր յոյժ առ փրկութիւն :

Պ. Հաղորդութիւն :

Հ. Օ ի՞նչ է հաղորդութիւն :

Պ. Հաղորդութիւնն է խորհուրդ . յորում հաւատացեալն ընդ տեսակաւ սրբազան հացի . նոյն իսկ մարմնոյն Վրիստոսի . և ընդ տեսակաւ գինւոյ . նոյն իսկ արեանն Վրիստոսի հաղորդի 'ի Թողութիւն մեղաց և 'ի ժառանգութիւն յաւիտենից կենաց :

Հ. Յուսմե՞ք կարգեցաւ խորհուրդս այս :

Պ. 'Ի Վրիստոսէ Վերկէն մերմէ :

Հ. Ե՞րբ և զե՞րբ :

Պ. Յերեկոյի մատնութեանն իւրոյ 'ի ձեռս Հրէից 'ի մահ , յետ ընթրեացն ընդ Մաւքելոց , զոր գիրն խորհրդական ընթրիք կոչէ , գոհացաւ Վրիստոս զՀօրէ Մատուծոյ . և զկնի աղօթիցն առեալ հաց , օրհնեալ , բեկեալ զայն

(1) . Յովհ . Գ . 5 :

ի մատուցանալ և բաշխեալ ամենայն աշակերտաց
իւրոց՝ ասաց. Մէք կերայք՝ այս է մարմին
իմ. (1) և ապա առեալ բաժակ գինեաւ բե-
րոյ որթոյ. ետ նոցա և ասէ. Մէք ի դմա-
նէ ամենեքին. զի այդ է արիւն իմ նորոյ
ուխտի որ ի վերայ բազմաց հեղու ի թո-
ղութիւն մեզաց. (2)

Հ. Ս. Եր կարգեաց քրիստոս զայդ եղջուրդ:

Պ. Ման զի ի կատարիլ խորհրդոյս յիշե-
ցուք միշտ զչարչարանսն՝ զոր չարչարեցաւ
Քրիստոս վասն մեր. (3) երկրորդ՝ զի հաւա-
սով հաղորդեալ նմին. ընկալուք զթողութի
մեզաց. ոգի խառնեցուք ընդ Քրիստոսի. (4)
և անվախճան կենաց լիցուք ժառանգորդք. (5)

Հ. Մ. Եր անեքն ընդունին զսյստիկ շահս ի հաղորդութեանէ:

Պ. Մենեկմիտ շահին՝ որք միանգամ առ այս
խորհուրդ սրբազան քննութեամբ անձանց (6)

(1). Մատ. Եր. 26.

(2). Մատ. Եր. 27 և 28.

(3). Զայս արարէք առ իմոյ յիշատակի. Եր. Ժ. Ժ. 24.

(4). Որ ուտէ զմարմին իմ. և և ըմպէ զարիւն իմ. Եր. Ժ. Ժ. 24.

(5). Որ անեքն ընդունին զսյստիկ շահս ի հաղորդութեանէ:

(6). Քրիստոսի. Եր. Ժ. Ժ. 24.

(6). Փորձեցէ՛ մարդ զանձն իւր. և սոքա ի հացէ անպի-
կիւնէ և ի բաժակէն արբցէ. Եր. Ժ. Ժ. 28.

և ճշմարիտ հաւատով արժանապէս մատչին.
Իսկ որ անարժանութեամբ հաղորդելու միայն
թափուր մնայ ի հոգեւորական օգտէ աստի,
այլև դատապարտի յԱստուծոյ իբրև անար-
գու սրբութեան հետուն. (1)

Հ. Ս. Եր ասն էր խորհուրդս այս կարևոր յոյժ հօգործի
առ փրկութիւն:

Պ. Ս. Եր ասն այնորիկ զի Փրկիչն զորս ոչ ըն-
դունին զայս, մերժէ ի ժառանգութեանէ ան-
վախճան կենաց. Եւ ինչ կերիցէք զմարմին
Որդւոյ մարդոյ և արբջիք զարիւն նորա, ոչ
ուսիք կեանս յանձինս. (2)

Հ. Ս. Որպիսի խորհուրդք դարձեալ պիտոյ են իւրաքան-
չիւր քրիստոնէի ի փրկութիւն:

Պ. Վրոշմ և ապաշխարութիւն:

Հ. Ս. Օրին է դրոշմ:

Պ. Վրոշմն է խորհուրդ, յորում յօծանիլ
արտաքուստ օրինադրեալ անդամոց մարմնոյ
միւսունաւ, պարգևին հաւատացելոյն ներքին
շնորհք հոգւոյն սրբոյ:

(1). Որ ուտիցէ զհացս, կամ ընպիցէ զբաժակս հետուն
անարժանութեամբ, պարտական եղիցի մօրմնոյ և արեւմ
հետուն. Եր. Ժ. Ժ. 27.

(2). Յովհ. Ժ. Ժ. 28.

Հ. () Եւմենի սահմանեցաւ խորհուրդդ այդ:

Պ. Ի սրբոց Մարգարեաց ողբ կատարելին զայդ գնելով զձեռն իւրեանց ի վր մկրտելոց: (1)

Հ. Օհարդ կատարի:

Պ. Սողմանակի յետ մկրտութեան քահանայն օծեալ միւսոնաւ զգլխաւոր անդամս մկրտելոյն, ասէ. Լինիք պարզեաց Հոգւոյն սբյ: (2)

Հ. Բնդէր հարկաւոր համարի գրոյմս իւրաքանչիւր քրիստոնէի:

Պ. Ս ասն այնորիկ՝ զի ամենայն դք կարօտի օգնականութեան և գործակցութեան պարզեաց սրբոյ Հոգւոյն ի պահպանութի օրինաց քրիստոնէութեան, զոր յանձն առնու ի մկրտութեան:

Հ. Օհնէ ալ խորհուրդդ գոյ հարկաւոր իւրաքանչիւր քրիստոնէի ի փրկութիւն:

Պ. Սպաշխարութիւն:

Հ. Օհնէ ասպաշխարութիւն:

Պ. Սպաշխարութիւնն է խորհուրդդ՝ յորում

(1) Թայնժամ եղին զձեռն ի վերայ նոցա՝ և առնուին զՀոգի սուրբ, Գործ. Բ. 17.

(2) Որ էօծ զմեզ՝ Աստուած է. որ և կնքեաց զմեզ. և ետ զառհասարակաց Հոգւոյն ի գործս մեր. Բ. 22. 21 և 22.

հաւատացեալն ճշմարտի ապաշաւեալ զմեզս իւր և հայցեալ զԹողութիւն նոցա ի շնորհս արդեացն Վրիստոսի՝ ընդունի զքաւութի մեղաց յԱստուծոյ ի ձեռն խոստովանահօրն:

Հ. () Եւմենի եղաւ խորհուրդս այս:

Պ. Ի Վիսուսէ Վրիստոսէ Փրկչէ մերմէ՝ Որ սկսաւ քարոզել և ասել՝ ապաշխարեցեք: (1) զկնի ինքեան զիշխանութիւն Թողութեան մեղաց աւանդեաց յԱւաքեալս իւր և ի յաջորդս նոցա ի Հովիւս եկեղեցւոյ ասելով. Լուէք հոգի սուրբ. եթէ ումեք Թողուցուք զմեզս, Թողեալ լիցի նոցա. եթէ զուրուք ունիցիք, կալեալ լիցի: (2)

Հ. Օհարդ կատարի այդ խորհուրդ:

Պ. Սպաշխարողն հաստատուն առաջադրուք ուխտէ այնուհետեւ անարատութեամբ քաղաքաւարիւ. խոստովանի զմեզս իւր Ստուծոյ առաջի քահանայի. և նա ըստ իշխանութեան Մարգարեութեանն և ըստ պարզեաց Հոգւոյն սրբոյ կապէ զնա կամ արձակէ: (3)

(1) Թաւ. Գ. 17.

(2) Թովհ. Ի. 22. և 23.

(3) Զոր Թաւ. Գ. 17. կապեացես յերկրի. եղիք՝ կապեալ

Հ. Րնէր այդ խորհուրդ հարկաւոր համարի իւրաքանչիւրում բխտանէի.

Պ. Վանդի ոչ ոք կարէ զինքն զերծ 'ի մեղաց համարիլ կատարելագէտ. (1) և ամ ոք մեղուցեալ՝ զգի յԱստուածային շնորհաց, վասն որոյ 'ի հաշտութիւն ընդ Աստուծոյ և 'ի վերստին ընդունելութիւն շնորհաց շնորհելոց 'ի մկրտութեանն, չիք այլ հնար ինչ բաց յապաշխարութենէ : (2)

Հ. Ուր յեօթն խորհրդոց եկեղեցւոյ ոչ զամենայն ոչ պարանդեն :

Պ. Լերեքին սորա. ձեռնադրութիւն, պսակ, և վերջին օծումն :

Հ. Օրն է ձեռնադրութիւնն :

Պ. Ձեռնադրութիւնն է խորհուրդ յորում հաւատացեալն ընտրեալ յեկեղեցւոյ՝ ձեռնադրութեամբ Լապիսկոպոսին նուիրի Հոգւով սրբով կատարել զխորհուրդս և հո-

յիւրկնս. և զոր արձակեսցես յերկրի եղևն՝ արձակեալ յերկրնս. Մատ. ԺԳ. 19 :

(1) Եթէ ասիցիմք. եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք՝ զմեզինս խաբեմք, և ճշմարտութիւն 'ի մեզ ոչ գոյ. Կոր. Ժ. 8 :

(2) Նպա եթէ խոստովան լինիցիմք զմեզս մեք՝ հաւատարիմ է նա՝ և արդար առ 'ի թողուլ մեղ զմեզս մեք. Կոր. Ժ. 9 :

վել զհօտ վերիստաթ : (1)

Հ. (Եւամբ ասցանեցաւ խորհուրդս այս :

Պ. Կարգադիր խորհրդոյս է (Եւսուս վերիստա՝ որ ընտրեաց զաշակերտս իւր 'ի սրբազան կոչումն առաքելութեան. (2) նոքա կացուցեալ յեկեղեցիս դպարդա իւրեանց յապիսկոպոսութիւն. (3) հաստատեցին մշտաբար զխորհուրդ. քահանայութեան : (4)

Հ. Օրն է կատարի ձեռնադրութիւնն :

Պ. Րնծայեալն 'ի քահանայութիւն յանդիմանի եկեղեցւոյն՝ որ հաստատե զընտրութիւն գոչելով՝ արժանի է. և Լապիսկոպոսն ձեռնադրեալ զնա. ինդրէ յԱստուծոյ ճայնակցութեամբ եկեղեցւոյն պարգևել նմա զգորովի,

(1) Եթ զձեզ չողին սուրբ տեղաւ՝ հովուել զժողովուրդ Տեառն. Գործ. Ի. 23 :

(2) Գնացէք այսուհետեւ աշակերտեցէք զամենայն հեթանոսս. մկրտեցէք զնոսա յանուն Հոր և Որդւոյ և Հոգւոյ՝ որոյ ուսուցէք նոցա պահել զամենայն՝ զոր ինչ պսակ տուրեցի ձեզ. Մատ. ԻԸ. 19. 20 :

(3) Զձեռնադրեցին նոցա լսող եկեղեցւոյ Երիցունս աղօթք տրալեալ հանդերձ պահօք՝ յանձն արարին զնոսա Տեառն Գործ. ԺԳ. 22 :

(4) Աստուհետեւ՝ որ զձեզ անարգէ՝ ոչ ըմբող տնարդէ, այլ զՍտուած՝ որ և ես զհոգին իւր տուրք 'ի ձեզ. Կոր. Գ. 3 :

զկարողութիւն և զհանձար անստերիւր ըն-
թանալոյ զձանապարհ կոչման իւրոյ :

Հ. Օ՛րն օգուտ ընծայէ այս խորհուրդ ընդունողին :

Հ. Ո՛ր արժանապէս ընթանայ զասպարէզ
քահանայութեան՝ մեծի պատուոյ և փառաց
ի հանդերձելումն լինի ժառանգորդ : (1)

Հ. Պատեն զի՞նչ է :

Պ. Եւ խորհուրդ եկեղեցւոյ՝ յորում այրն
և կինն աղօթիւք քահանայի և եկեղեցւոյն
ընդունին փոխադարձ համաձայնութեանն իւ-
րեանց զօրհնութիւն յԱստուծոյ :

Հ. Ո՛ր է սահմանադիր խորհրդոյս :

Պ. Ինքն Աստուած՝ որ օրհնեաց զնախա-
տեղծան՝ զայրն և զկինն, զնախահարս մեր : (2)

Հ. Ո՛րպէս կատարի :

Պ. Ի գալ առն և կնոջն յեկեղեցի և ի
յայտնել նոցա ի լուր ժողովրդեան զփոխա-

(1) . Զի որք բարւոք պաշտիցեն, զաստիճան բարի անձանց
իւրեանց շահին, և զբազում համարձակութիւն ի հաւատան,
որ ի քրիստոս Յիսուս . ա . Տիմ . Գ . 13 :

(2) Արու և էգ արար զնոսա և օրհնեաց զնոսա Աստուած
և ասէ անեցէք և բազմացորուք և լեցէք զերկիր . Դնն .
Գ . 27 . 28 :

դարձ հաւանութիւն իւրեանց միմեանց . քա-
հանայն աղօթիւք եկեղեցւոյն հայցէ ի վերայ
նոցա զօրհնութիւն Աստուծային և հաստա-
տէ զչաղկապ ամուսնութեան նոցա :

Հ. Ո՛ր ասն էր խորհուրդդ այդ օգտակար համարի ի փոք-
կութիւն :

Պ. Ո՛ր ասն այնորիկ՝ զի համաձայն դիտաւորումն
Լ. Եւ նպաստէ աճելուէ ազգի մարդկան և
խուսափելոյ յԱստուծ ընդդէմ մոլութեց :

Հ. Օ՛րն է վերջին օծումն :

Պ. Եւ խորհուրդ՝ յորում հաւատացեալն
անկեալ ի հիւանդութիւն ինչ, օծուի ի
քահանայէն իւղով՝ ընդունի զբժշկութիւն
և զմեղաց թողութիւն :

Հ. Ո՛ր է կանոնադիր խորհրդոյս :

Պ. Հոգին սուրբ ի ձեռն Առաքելոյն (Հա-
կովբայ, որ գրէ . Հիւանդանայցէ ոք ի ձէնջ՝
կոչեսցէ՝ զերիցունս եկեղեցւոյն . և արասցեն
ի վերայ նորա աղօթս, օծցեն իւղով յանուն
Տեառն, և աղօթքն հաւատովք փրկեսցէ
զաշխատեալն, և յարուսցէ զնա Տէր . և եթէ
մեղս ինչ իցէ գործեալ, թողցին նա : (1)

(1) . Թիմ . Կ . 14 և 15 :

Հ. Լ. ժամանակ մի աւանդեցան եկեղեցւոյ այս ամենայն
խորհուրդք, թէ մշտնջենաբար:

Պ. Ս. շտնջենաբար. քանզի պատուիրէ փրկիչն
Լուսաբերոյն բանիւ. Բանիցս անգամ եթէ
ուտիցէք զհացս զայս, և զլաժակս ըմպիցէք՝
զմահ ճեառն պատմեցէ՛ք. մինչև եկեսցէ նա.
(1) ուրեմն հարկ ՚ի վերայ կայ եկեղեցւոյն
կատարել զայնոսիկ մինչև ց/իւսանգամ գա-
լուստն Բրիստոսի:

Գ. Լ. Ս. Խ. Ժ.

Թաղաքս երկրորդ գալստեան Բրիստոսի:

Հ. Օ. Ի՛նչ գրի ի հանգանակի զերկրորդ գալստեանն
Բրիստոսի:

Պ. Լ. Թ. թներորդ անգամ. Գալոյ է նովն
մարմնով և փառօք հօր ՚ի դատել զկենդա-
նիւ և զմեռեալս որոյ Թաղաւորութեանն ոչ
գոյ վախճան:

Հ. Օ. Ի՛նչ դաւանիմք ըստ ոյդմ անգամ չանգանակիդ:

Պ. Թ. Ե. Յիսուս Բրիստոս ըստ խոստմանն
իւրոյ գալոց է միւսանգամ յաշխարհ ոչ ևս

(1) . ա . Գրն . Ժա . 23:

ի կերպարանս նուաւորութեան, այլ փառօք
Լստուածութեանն իբրև դատաւոր և Թա-
ղաւոր աշխարհի հատուցանել իւրաքանչիւր
ումէք ըստ գործոց: (1)

Հ. Լ. Իբ եղիցի երկրորդ գալուստն Բրիստոսի:

Պ. Օ. այսմանէ չիք յայտնուի ինչ յԼստուա-
ծաշունչ գիրս: (2) զայս ինչ և եթ գիտեմք
թէ՛ լինելոց է այն ՚ի կատարած աշխարհի: (3)

Հ. Ս. Եր Ժաժկեալ է ՚ի մէջ ժամանակ երկրորդ
գալստեանն Բրիստոսի:

Պ. Ս. Եր այնորիկ՝ զի զամենայն ժամանակս
կենաց մերոց ջանացուք անարատ գտանիլ և
պատրաստք կալ առաջի ատենին Ս. Ե. (4)

(1) . Եւ յորժամ եկեսցէ թրդի մարդոյ փառօք իւրովք
և ամենայն հրեշտակք ընդ նմա. յայնժամ նստցի յաթոռ
փառաց իւրոց և ժողովեցին առաջի նորա ամենայն ազգք
և մեկնեսցէ զնոսա ՚ի միմեանց որպէս հովիւ զի մեկնեսցէ
զսդիս յայծեսց Կատ. ի Ե. 31 և 32:

(2) . Բայց վասն աւուրն այնորիկ և ժաման, ոչ որ գիտէ.
ոչ հրեշտակք երկնից, և ոչ որդի բոց միայն Հայր.
Կատ. ի Դ. 36:

(3) . Այլ յաւուրն յայնոսիկ . . . արեգակն խաւարեսցի, և
Լսին՝ ոչ տայէ զլոյս իւր. և աստեղք յերկնից թփա-
րեսցին՝ և զօրութիւնք յերկնս շարժեսցին, և յայնժամ
տեսցեն զորդի մարդոյ եկեալ ամբովք, և զօրութեամբ՝ և
փառօք բազմօք: Կոր. Ժ. 24: 25 և 25:

(4) . Ընթուր կայէք, զի ոչ գիտէք յորում ժամա Եկին

Հ. Օ՛րն է կատարած աշխարհիս:

Պ. Կատարած աշխարհի է վախճան գոյում է կենցաղոյս և վերջին սահման ժամանակացի (1)

Հ. Հաստատե՛ր սուրբ գիրն զկատարած աշխարհիս:

Պ. Լ՛յո քանզի (3) Վրիստոս ինքնին ճշմարտէ զայն, ասելով. Լորկինք և երկիր անցցեն (2)

Հ. Օ՛րն է եղիցի կատարած աշխարհիս:

Պ. Օ՛այս մասամբ իւր ստորագրէ Լ՛ռաքեալն Պետրոս օրինակ զայս. Լ՛յժմ երկինք և երկիր նովին բանիւ գանձեալ են. հրոյ պահեալք յօրն դատաստանի. . . այլ եկեսցէ օր Տեառն իբրև զգող, յորում երկինք տաքնապաւ անցցեն, և բնութիւնք հրով կիզեալ լուծցին, և երկիր՝ և որ միանգամ ՚ի նմա գործք գտանիցին (3)

Հ. (3) այսն է գիրն զժամանակ կատարածի աշխարհիս

Պ. Ը. զի ծածկեաց զայն Վրիստոս յաշակերտաց իսկ իւրոց և յԼ՛ռաքեւոց, ասելով.

ձեր գայ: Վասն յայտրիկ և դուք եղբրուք պատրաստք, զի յորում ժամուռ ոչ ակնունիցիք, գայ Որդի մարդոյ:

Մատ. իդ. 42. և 45.

(1). Զի ոչ ևս կայ այլ ժամանակ: Յայտ. ժ. 6.

(2). Մատ. իդ.

(3). Բ. Պետ. գ. 7. և 10.

Ը է ձեզ գիտել զժամն և զժամանակագորհայր եդ յիւրում իշխայնութեան (1)

Հ. Ընդէ՛ր յամեցուցանէ քրիստոս ցարդ զերկրորդ գալուստն իւր:

Պ. Ը. ասն այնորիկ միայն՝ զի քաղցր երկայն մտութեամբ իւրով սարսէ մաքրութեանս մերում ՚ի մեղաց և ապաշխարութեան (2)

քանզի ՚ի գալստեան իւրում ոչ ևս ողորմեսցի նա յայեղ ատենի անդ մեղաւորաց այլ դատաստան արդար դատեսցի (3)

Հ. Օ՛րն է անդ դատաստան լսուծոյ:

Պ. Ը. Տեղ. վերջին և ընդհարակցան դատաստանն է՝ յորում ՚ի հանդերձեալ գալստեանս Վրիստոս յայտնեսցին զործք բանք յօժարութիւնք և գաղտնիք սրտից մարդկան և ընկալցին զարժանաւոր հատուցումն (4)

(1). Գործ. ա. 7.

(2). Ը. յամեցուցէ Յէր զուեռիսն՝ որպէս ամենք յայն համարին, այլ երկայնամիտ լինի առ ձեզ. քանզի ոչ կամի թէ զքեզ կորիցէ. այլ ամենեցուն հասանել յապաշխարութիւն, Բ. Պետ. գ. 9.

(2). Ինքն դատի զաշխարհս արդարութեամբ, և ժողովուրդս իւր ուղղութեամբ, Սաղմ. թ. 9.

(3). Ըսեմ ձեզ. թէ ընդ ամենայն դատարկ բանի զոր խօսիցին մարդիկ, տացեն համար յաւուրն դատաստանի, Մատ. ժ. 36.

Հ. Սի միայն քրիստոս եղեցի դատաւոր աշխարհի,
 Պ. Սուրբ Լորդդուհի դատեցէ զաշխարհս (1)
 բայց ի դէմն Լստուածամարդոյն Վսի (2)
 Հ. Օրհար դատեցէ քրիստոս զկենդանիս և զմեռեալս
 Պ. Եւսի յարուցէ զմեռեալս և ապա ընդ
 կենդանեացն կոչեցէ ի դատաստանս :

ԳԼՈՒԽ ԺԵ.

Յաղագս յարութեան մեռելոց :

Հ. Օրհնչ նշանակէ յարութիւն մեռելոց,
 Պ. Օայն թէ ի հող լուծեալ մարմինք
 մեր կենդանացեալ, վերստին միաւորեցին
 ընդ հոգւոց մերոց : (3) :
 Հ. Հաստատէր յայտնութիւնն զյարութիւն մեռելոց,
 Պ. Բացայայտ և հաւաստի թանիւք հաստատի ի
 սք գիրս յարուհի մեռելոց (4) և է գերագոյն

- (1) . Տէր Հայր մեր, Տէր դատաւոր մեր, Տէր Իշխան մեր,
 եսայ . ԼԳ . 22 :
 (2) . Յաւուրն յորում դատիցի Լստուած զգալանիս մարդ-
 կան . . . ի ձեռն Յիսուսի քրիստոսի . Հռովմ . Բ . 16 :
 (3) . Եւ բազումք ի ննջեցելոց ի հող երկրի յարիցեն,
 ոմանք ի կեանս յաւիտենականս, և ոմանք ի նախատիկս
 և յամսթ յաւիտենական, Դան . ԺԲ . 2 :
 (4) . Որպէս լիցաման ամենեքին մեռանին, նոյնպէս և քրիս-
 տոսը ամենեքին կենդանացին : ա . Կորն . ԺԵ . 22 :

անդամ հաւատոյս մերոյ : 1) -

Հ. Օրհնչ գրի ի հանգանակին զայսմանէ .
 Պ. Մեռածաներորդ անդամ . (հաւատամք)
 ի յարութիւն մեռելոց :
 Հ. Օրհնչ դաւանիմք ըստպիմ անդամոյ հանգանակիդ
 Պ. Թէ աներկիտ յուսամք յետ մահուան
 յերկրորդ զալստեանն Վրիստոսի յառնել
 ընդ մարմնոց մերոց :
 Հ. Սասն էր հաւատամք կարելի լինել յարութեան
 մեռելոց :
 Պ. Եւսի զի Վրիստոս յարութեամբ իւրով
 հաստատեաց զայս ընդհանրական յարուհի մե-
 րոյ : (2) երկրորդ՝ եթէ կարաց Լստուած յա-
 նէից ստեղծանել զամենայն արարածս, ևս ա-
 ուաւել կարացէ զբայքայեալ և զապակա-
 նեալ մարմինս մեր վերստին նորոգել : (3)

- 1 . Իսկ եթէ մեռեալք ոչ յառնեն . . . ընդունոյն են հաւատքն
 ձեր : ա Կորն . ԺԵ . 16 . 17 :
 (2) . Եթէ հաւատամք՝ եթէ՝ Յիսուս մեռաւ և յարեաւ .
 նոյն պէս և Լստուած զննջեցեալսն ի ձեռն Յիսուսի ածցէ
 ընդ նմա . ա . ԹԵ . Դ . 13 :
 (3) . Այլ ասիցէ որ զհարդ յառնեն մեռեալք, կամ որով
 մարմնով զայցեն . անմիտ, դու զոր սերմանեան ոչ կենդանա-
 նայ եթէ ոչ մեռանիցի . և Լստուած տայ նմա մարմին որ-
 պէս և կամի . Բ . Կոր . ԺԵ . 35 . 36 . և 38 :

Հ. Ո՛րք Ե՛ր Երեւոյն ընդ մարմնոց :

Պ. Որովհետեւ յաստի կեանս ներգործեմք հոգւով և մարմնով միանգամայն . վասնորոյ արդարութիւնն լստուծոյ սահմանէ մեզ զեւրանութիւն կամ զտանջանս ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ : (1)

Հ. Օ՛րք եղիցին մարմնք մեր յեա յարութեան :

Պ. Լ՛նապականք և անմահք : (2)

Հ. Լ՛մենքեան յարիցեն և արդարք և անօրէնք :

Պ. Լ՛մենքին առ հասարակ ըստ բանի Փրկչին Լ՛կեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին որ ՚ի գերեզմանս կայցեն . լուիցեն ձայնի նորա և եկեսցեն արտաքս . որոց զբարիս գործեալ իցէ ՚ի յարութիւն կենաց . և որոց զչար արարեալ իցէ ՚ի յարութիւն գատաստանաց : (3)

Օ՛րք եղիցի որոց կենդանի մնացեալ իցեն ՚ի ժամանակի գալստեանն քրիստոսի :

Պ. Լ՛ոքա ո՛չ մեռցին՝ այլ յանկարծ իմն փո-

(1) քի ընկալի իւրաքանչիւր իւրով մարմնով զոր ինչ գործեաց յառաջ՝ եթէ բարի և եթէ չար : Բ. Կոր. Ե. 10

(2) . քի պարտ է ապականութեանս այսմիկ զգենուլ զանապականութիւն . և մահկանացոյիս այսմիկ զգենուլ զանմահութիւն : Բ. Կոր. Ժ. 53.

(3) . Բովհ. Կ. 28 և 29 :

փոխեցին ՚ի նմանութիւն յարացելոց . ըստ այնմ մեռեալք ՚ի Վրիստոս յարիցեն յառաջագոյն . (1) ապա և մեք , որ կենդանւոյն մնացեալ իցեմք , (2) ամենեքեան ննջեսցուք , այլ ոչ եթէ ամենեքեան . նորոգեսցուք յանկարծակի յական թօթափել : (3)

Հ. Լ՛նի՛ն յարիցեն մեռալք :

Պ. Լ՛ն կեանս յաւիտենից :

Գ՛Լ Ո՛րք . Դ՛Լ

Թաղաք հանդերձեալ կենաց :

Հ. Օ՛րք Դ՛ր ՚ի հանգանակի զհանդերձեալ կենաց :

Պ. Լ՛ըրկոտասաներորդ անդամ . (հաւատամք) ՚ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց . յարքայութիւնն երկնից և ՚ի կեանսն յաւիտենականս :

Հ. Օ՛րք գաւանիմք ըստ այդմ անդամոյ հանգանակի :

Պ. Լ՛իէ ըստ հաւաստի վկայուե սուրբ գրոց աներկմիտ ակնունիմք այլ կենաց յեա մահ-

(1) . Թ. Բ. Կ. 15 :

(2) . Եւդ. 16 :

(3) . Թ. Կոր. Ժ. 51 . և 52 :

ուան, որ և զկնի ընդ հանրական յարութեան
լինելոցէ յաւիտենական : (1)

Հ. Սրբինացի իցէ վիճակ ամենեցուն ի հանդերձելուն
Պ. Ո՛հ. քանզի արդարեւ Տեառն յահաւոր
ատենին վճռոյ վայելեացեն ի նմին զերանու
թիւն, իսկ մեղաւորք դատապարտեսցին ի
տանջանս :

Հ. Րմենքին առ հասարակ ունիցին զկեանս յաւիտենից :
Պ. Ի՞նչպէս արդարեւ և մեղաւորք առ հասարակ
ունիցին զկեանս յաւիտենականս, այլ ու
շովհետեւ յաւիտենական կեանք մեղաւորաց
ի պատճառս տանջանացն դառնագոյն ևս է
քան զամ մահ, վասն որոյ և ասի յԱստուածաշու
նչ տառն արդարոց միայն ունել ըզ
կեանս յաւիտենականս. իսկ մեղաւորաց զմահ
յաւիտենական : (2)

Հ. Օ՛հնչ իցէ մահն յաւիտենական :

Պ. Ի՞նչ այն ահեղ և թշուառ վիճակ դատա
պարտելոց՝ յորում նոքա զըկեալ յաւիտեան

(1). Կեանս յաւիտենականս եւ մեղ Աստուած և այս է
կեանքն, որ յՈրդին նորա են. ա. Յովհ. Ե. 11.

(2). Անուն կենդանւոյ ունիս՝ և մեռեալ ես. Յայտ. 7. 2.

ի տեսուի Մատուցոյ, (1) և ի հաղորդուի
երանելաց, (2) յաւիտեն տանջեսցին ի դժոխս
անշեջ հրով և անվախճան պատժովք : (3)

Հ. Սրբինացի տանջեսցեն ամենայն մեղաւորք :

Պ. Ո՛հ. այլ ըստ չափու մեղաց, ըստ այնմ.
Դառայ՝ որ գիտիցէ զկամս Տեառն իւրոյ՝ և
ոչ պատրաստեսցի ըստ կամաց նորա, արբցէ
գան բազում և որ ոչն գիտիցէ՝ և արժանի
գանի ինչ գործիցէ, արբցէ գան սակաւ : (4)

Հ. Օ՛հնչ է կեանքն յաւիտենական :

Պ. Ի՞նչ այն երջանիկ վիճակ ընտրելոց՝ յոր յա
ւիտեան վայելեսցեն նոքա յետ յարութեանն
յԱստուած և ընդ Մատուցոյ :

Հ. Օ՛հա՛րդ եղիցի երանութիւնն արդարոց :

Պ. Ուրբ գիբք ոչ ստորագրեն զայն մի առ

(1). Որք տայցեն վրէժս ի անտաղումն յաւիտենից յե
րեսաց Տեառն. բ. Թէս. ա. 9.

(2). Եւ ի վերայ այսր ամենայնի՝ վիճ մեծ է ընդ մեզ և
ընդ ձեզ. եթէ կամիցին աստի՝ առ ձեզ անցանել ոչ կա
րեն և ոչ այտի որ՝ առ մեզ անցանել. Ղուկ. Ժ. 26.

(3). Երթալք յինեն՝ անիծեալք ի հուրն յաւիտենական
որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա, և եր
թիցեն նոքա ի տանջանսն յաւիտենականս. Մատ. Ի. 41 և

(4). Ղուկ. Ժ. 47 և 48.

Վ. զի անձառ է այն մարդկային լեզուի և անհաս մտաց. (1) բայց ծանուցանէ լինել այն միջ ոչ հեշտութիւն զգայական, այլ երանաւետ վիճակ անընդհատ և հոգեւոր ուրախութեան: (2)

Հ. Օրհնէ իցէ հոգեւոր ուրախութիւն արգարոց.

Պ. Եւսաւորութիւն ամենապայծառ լուսով Լստուածգիտութեան. (3) դէմ յանդիման տեսութիւն Լստուածոյ (4) և անպատում սիրելութիւն Լստուածոյ: (5)

Հ. Օրհնէ հոգեւոր ուրախութիւն ուրախացին Նոբ և ևս.

Պ. Ի կամս նոցա եղիցի յայնժամ կատարեալ սրբութիւն. իսկ ՚ի հոգեւան խաղաղութիւն Լստուածային և անխուղ անդրորութիւն: (6)

(1). Զոր ակն ոչ ետես և ունին ոչ լուսաւ և թ սիրտ մարդոյ ոչ անկաւ պատրաստեաց. Աստուած սիրելեաց իւրոց. ա. Կորն. բ. 9.

(2). Եւ զուրախութիւն ձեր ոչ դք հանիցէ ի ձենչ. Թով. Ժգ. 22.

(3). Այս են յաւիտենական կեանք, զի ծանցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած. Թով. Ժե. 3.

(4). ա. Կորն. Ժգ. 12.

(5). Անդ. Ժգ. 3.

(6). Կարգուցէ ինքն իւր յանդիման փառաւոր զեկեղեցի.

Հ. (Ինչ կայացի երանութիւն մարմնոց մերոց.

Պ. (Եւ այն զի մարմինք արդարոց փառաւորեացին և հոգիասցին. (1) և անապական և անմահ գոլով ազատք եղեցին ՚ի հիւանդութեաց և անկարօք ուտելեաց և ըմպելեաց: (2)

Հ. Օրհնէ պարտ իցէ ժամանել յայս երանութիւն անվիճան.

Պ. Լու ՚ի լինել արժանի այսմ գերակատար երանութեան հարկէ մեզ անխնայ արկանել զանձինս մեր ՚ի հանդէս բարեպաշտութեան և հաւատոց. արմատախիլ առնել զամենայն ընդաբոյս չարաչար հակամիտութիւնս կամաց մերոց և խնդրել զայն ամենայն զօրութեամբ հոգւոյ և մարմնոյ որպէս ցանկայ Լուաքեալն. Ինքն Լստուած խաղաղութեան սուրբս արասցէ զձեզ համօրէնս, և բովանդակ ձեր ոգի և շունչ և մարմին անարատ ՚ի գալուստ հեառն մերոյ (Եւսուսի Վերիստոսի պահեսցի: (3)

Ըի մի ունիցի ինչ արտա կամ աղտեղութիւն, կամ այլ ինչ յայսպիսեաց, այլ զի իցէ սուրբ և անարատ Վիս. ե. 27.

(1). Սերմանի մարմին շնչաւոր և յառնէ մարմին հոգեւոր. ա. Կորն. Ժե. 44.

(2). Ի յարութեանն ոչ կանայս առնեն և ոչ արանց ինին, այլ են իբրեւ զհրեշտակս յերկինս. Ասա. Իբ. 0.

(3). ա. Բես. է. 22 և 23.

Վ. Ե. Խ. Ա. Ե. Ե.

ՅԱՆ Կ ՄԱՍՆԱՆ

Յաղագս բնական Աստուած գիտութեան:

Գլուխք:

Երեսք:

Ա. Յաղագս գիտութեանն Աստուծոյ	6.
Բ. Յաղագս յատկութեանց Աստուծոյ	12.
Գ. Յաղագս Արարչագործութեանն Աստուծոյ	17.
Դ. Յաղագս նախնականութեանն Աստուծոյ	20.
Ե. Յաղագս Աստուածաշնորհութեան	23.
Զ. Յաղագս յայտնութեանն Աստուծոյ	27.

ՄԱՍՆԱՐ

Յաղագս յայտնական Աստուածգիտութեան:

Գլուխք:

Երեսք:

Ա. Յաղագս գիտութեան և յայտնութեանց Աստուծոյ	31.
Բ. Յաղագս ամենասուրբ Երրորդութեան	36.
Գ. Յաղագս արարչութեան Աստուծոյ	42.
Դ. Յաղագս խնամարկութեանն Աստուծոյ	49.
Ե. Յաղագս մարմնաւորութեան Աստուածորդւոյն	52.
Զ. Յաղագս շնորհաց Աստուծոյ	66.
Է. Յաղագս օրինաց Աստուծոյ	73.
Ը. Յաղագս եկեղեցւոյ Աստուծոյ	99.
Թ. Յաղագս խորհրդոյ եկեղեցւոյ	108.
Ժ. Յաղագս երկրորդ գալստեանն Քրիստոսի	120.
ԺԱ. Յաղագս յարութեան մեռելոց	124.
ԺԲ. Յաղագս հանդերձեալ կենաց	127.

ՄՀայագիտական գրադարան



MAL046870

